

Որակի կառավարման խորհրդատվություն
մասնագիտական կրթության և ուսուցման համար

Ֆինլանդիայի Կրթության Ազգային Խորհուրդ

Բովանդակություն

Առաջաբան.....	3
1. Որակի կառավարման խորհրդատվության նպատակը և գործառույթները	4
2. Մասնագիտական կրթության և ուսուցման որակի կառավարում	5
Մասնագիտական կրթության և ուսուցման որակի հեռանկարները	5
Մասնագիտական կրթության և ուսուցման որակի կառավարման ազգային համակարգ	5
<i>ՄԿՈԻ իրականացնողների գործառնական համակարգերը, որպես որակի կառավարման հիմք.....</i>	6
<i>Մասնագիտական կրթության և ուսուցման ազգային վերահսկումը, որպես որակի կառավարման մաս.....</i>	6
<i>Կրթության և ուսուցման արտաքին գնահատում.....</i>	6
<i>Որակի կառավարման աջակցությանն ուղղված Եվրոպական համագործակցություն.....</i>	7
3. Որակի կառավարման խորհրդատվության կառուցվածքն ու նախադրյալները.....	9
4. Մասնագիտական կրթության և ուսուցման որակի կառավարման խորհրդատվություններ.....	10
1. Ֆունկցիաների դիտարկումը՝ որպես մեկ ամբողջություն.....	10
2. Սպառողակենտրոն մոտեցում	13
3. Առաջնորդություն	15
4. Արդյունակենտրոն մոտեցում	18
5. Շարունակական ուսուցում, նորարարություն և առաջխաղացում.....	21
6. Մարդիկ՝ որպես ռեսուրս.....	24
7. Արդյունավետ գործընթացներ.....	27
8. Համատեղելիությունը աշխատանքային ոլորտի և համագործակցության հետ	31
9. Սոցիալական պատասխանատվություն	35
ԲԱՌԱՐԱՆ.....	37

Առաջաբան

Մասնագիտական կրթությունը և ուսուցումը նշանակալից ներդրում ունեն գիտելիքի վրա հիմնված համաշխարհային տնտեսության մրցակցության և դրա բարեկեցության հարցում: Մասնագիտական կրթության և ուսուցման գլխավոր խնդիրը անհատներին և աշխատանքային ոլորտի ներկայացուցիչներին անհրաժեշտ, փոփոխվող հմտությունների պահանջը բավարարելն է համաձայնեցնելով ցկյանս ուսուցման սկզբունքների հետ: Մինչ նոր հմուտ աշխատողների պահանջարկն աճում է, կարևոր է նաև զարգացնել և բարելավել ներկայիս աշխատուժի հմտությունները և նպաստել աշխատանքի առաջխաղացմանը: Բացի այդ, ՄԿՈՒ հիմնական լսարանը շարունակաբար փոփոխվում է: Կրթությունը և ուսուցումը նախագծելու և իրագործելու համար կարևոր է հաշվի առնել անհատական կարիքները և նախկինում ձեռք բերված հմտությունները: Մասնագիտական կրթության և ուսուցման հիմնական առաքելությունը ներառում է նաև տարբեր ծառայություններ և զարգացնող հանձնարարություններ, որոնք նպատակաուղղված են աշխատանքի վայրում, մասնավորապես ՓՄՁ-ում (Փոքր և միջին ձեռնարկություններ) ծավալել նորարական գործունեություններ և միկրո-ձեռնարկություններ, ծավալել գործունեություն և ստեղծել աշխատող համայնքներ:

Թե՛ Ֆինլանդիայի, և թե՛ Եվրոմիության համար առանցքային կարևորություն ունի մասնագիտական կրթության և ուսուցման որակի շարունակական բարելավումը: Որակի բարձրացումը Կոպենհագենի մասնագիտական կրթության և ուսուցման գործընթացի հիմնական նպատակներից է: Մյուս առանցքային խնդիրներից է մասնագիտական ոլորտի ուսանողների մոտ առաջացնել հետաքրքրություն կրթության և ուսուցման հանդեպ և սերմանել առաջխաղացման ձգտում:

Կրթության նախարարությունը ընդունել է մասնագիտական կրթության և ուսուցման որակի կառավարման խորհրդատվություն, որը քաջալերում և աջակցում է ՄԿՈՒ անցկացնողներին ձգտել կատարելության և բարելավել իրենց գործառնությունները: Խորհրդատվությունը հիմնված է մասնագիտական կրթության և ուսուցման Որակի Ապահովման Ընդհանուր Շրջանակի վրա (CQAF) և այն մեծ դեր է խաղում Ֆինլանդիայի Կոպենհագենյան գործընթացը իրագործելու հարցում: Խորհրդատվությունը պատրաստվել է Ֆինլանդիայի կրթության ազգային խորհրդի կողմից, ՄԿՈՒ անցկացնողների, աշխատանքային և բիզնես ոլորտի ներկայացուցիչների, ինչպես նաև ուսանողների հետ համատեղ գործունեության արդյունքում:

Որակի կառավարման խորհրդատվության նպատակն է ստեղծել նպաստավոր հիմք մասնագիտական կրթության և ուսուցման բոլոր ոլորտներում որակի կառավարման երկարաժամկետ զարգացման համար: Խորհրդատվությունները կարող են կիրառվել տարբեր ճանապարհներով իրականացվող մասնագիտական կրթության և ուսուցման համար. սկզբնական ՄԿՈՒ և շարունակական ուսուցում, հմտությունը ստուգող թեստեր և դասընթացներ հիմնված պահանջվող հմտությունների վրա, ինչպես նաև դասաժամային կամ դպրոցական ՄԿՈՒ, ՄԿՈՒ հատուկ կարիքավորների համար և աշակերտության ուսուցանում: Բացի այդ, խորհրդատվությունները այնպես են պատրաստված, որ կարող են կիրառվել թե՛ ՄԿՈՒ անցկացնողների, թե՛ անհատ միավորների մակարդակներով, ինչպես նաև

համապատասխանում են որակի բարելավման տարբեր աստիճանների վրա գտնվող օգտվողներին:

1. Որակի կառավարման խորհրդատվության նպատակը և գործառույթները

Մասնագիտական կրթության և ուսուցման որակի կառավարման խորհրդատվությունը նախագծված է աջակցել ՄԿՈԻ անցկացնողներին զարգացնել որակով կառավարում և խրախուսել նրանց շարունակաբար բարելավել իրենց գործունեությունների որակն ու արդյունքները՝ ձգտելով կատարելության:

Փաստաթուղթը նախատեսված է բոլոր ՄԿՈԻ անցկացնողների, բոլոր ենթամասերի և գործունեության տեսակների համար, որպես որակի կառավարման զարգացման ռազմավարական գործիք: Այն ծառայում է քաղաքացիական ավագ ծառայողների, ընտրված պաշտոնյաների, ՄԿՈԻ մյուս աշխատողների, և նրանց մեջ գոյություն ունեցող միավորումների համար:

Այս փաստաթղթում ամրագրված անհատական խորհրդատվությունների նպատակն է բարձրացնել որակի կառավարմանը վերաբերող հարցեր և սկզբունքներ աշխատանքներին աջակցելու համար: Փաստաթուղթը չի ներկայացնում լուծումներ կամ պատրաստի մոտեցումներ, դրանք ընտրում են անհատ ՄԿՈԻ պատասխանատուները, այն նաև չի առաջարկում որակի կառավարման նվազագույն չափանիշներ, փոխարենը այն խթանում է օգտագործողներին ծավալել իրենց գործունեությունը՝ ձգտելով կատարելության: Օգտագործողի հայեցողությանն են թողնված նաև խորհրդատվությունները կիրառելու ձևերը: Բացի այդ, փաստաթուղթը չի նախատեսում փոխարինել որևէ որակի ապահովման գոյություն ունեցող համակարգ, կամ ստիպել օգտագործողներին որևէ հատուկ համակարգ կիրառել: Խորհրդատվությունները կարող են կիրառվել գոյություն ունեցող համակարգի հետ:

Մասնագիտական կրթության և ուսուցման որակի կառավարման խորհրդատվությունը հիմնված է Որակի Ապահովման Համընդհանուր Շրջանակի վրա և զարգացել է որպես Եվրամիության մասնագիտական կրթության և ուսուցման Կոպենհագենյան գործընթացի մի մաս: Եվրամիության խորհուրդը 2004 թ.-ի մայիսին թողարկել է խորհրդատվություն, որպեսզի զարկ տա Որակի Ապահովման Համընդհանուր Շրջանակի իրականացմանը անդամ երկրներում: Որակի Ապահովման Համընդհանուր Շրջանակը նախատեսված է զարգացնելու, վերահսկելու, գնահատելու և բարելավելու որակի համակարգը և որակի կառավարման փորձերը թե՛ ազգային, և թե՛ ՄԿՈԻ պատասխանատուների մակարդակով: Ի լրումն, այն նպատակաուղղված է խրախուսել մասնագիտական կրթության և ուսուցման շրջանակներում գործող տարբեր կուսակցություններին կամավոր հիմունքով կիսվել փորձով, տարրորոշել և օգտվել դրական փորձից և սովորել միմյանցից: Մյուս նպատակը տարբեր անդամ երկրների, կրթության և ուսուցման տարբեր մակարդակների և համակարգերի գործառույթների և արդյունքների համեմատության հեշտացումն է:

Ի լրումն փաստացի խորհրդատվությունների, այս փաստաթուղթը ներառում է այնպիսի հիմնական հասկացությունների բնութագրում, ինչպես որակի կառավարում, մասնագիտական կրթության և ուսուցման որակ, որակի ապահովման ազգային համակարգ: Այս բնութագրությունների նպատակն է պարզել որակի կառավարման խորհրդատվության կարգավիճակը, որպես մասնագիտական կրթության և ուսուցման որակի ազգային հաստատման մաս և մատնանշել որակի կառավարման կարևորությունը ՄԿՈԻ զարգացման շրջանակում: Բացի այդ, փաստաթուղթը ներառում է որակի կառավարման հիմնական տերմինների բացատրություններով բառարան:

2. Մասնագիտական կրթության և ուսուցման որակի կառավարում

Մասնագիտական կրթության և ուսուցման որակի հեռանկարները

Որակին կարելի է տալ տարբեր սահմանումներ: Օրինակ, գերազանց հմտություն, թերությունների բացակայություն, համընդհանուր որակ, սպառողների պահանջների բավարարում կամ գործառույթների բարելավում:

ՄԿՈԻ որակին համընդհանուր և միանշանակ սահմանում տալու փոխարեն ավելի տեղին է դիտել այն որպես հարաբերական և համատեքստային հասկացություն: Որակը միշտ էլ ակնկալում է սպառողի պահանջների բավարարում: Որակին սահմանում տալը, ի վերջո, ՄԿՈԻ անցկացնողների, սպառողների և շահառուների հիմնական խնդիրն է:

Որակի ապահովումը և կառավարումը կարող են սահմանվել տարբեր կերպ: Այս փաստաթղթում որակի կառավարումը ներառում է այն ընթացակարգերը, գործընթացները կամ համակարգերը, որոնք օգտագործվում են ՄԿՈԻ անցկացնողների գործառույթների որակը ապահովելու և բարելավելու համար: Որակի կառավարումը ՄԿՈԻ անցկացնողների գործառույթային համակարգի անբաժան մասն է և հետևաբար կապված է կառույցի բոլոր գործառույթների և մակարդակների հետ:

Մասնագիտական կրթության և ուսուցման որակի կառավարման ազգային համակարգ

Մասնագիտական կրթության և ուսուցման որակը ապահովելու և բարելավելու տարբեր ուղիներ կան: Ֆինլանդիայում մասնագիտական կրթության և ուսուցման որակի կառավարման ազգային համակարգը ներառում է ՄԿՈԻ անցկացնողների, ազգային վերահսկողության և արտաքին գնահատման որակների կառավարումը: Որակի ապահովմամբ զբաղվող միջազգային կառույցներն ու օրինագծերը, ինչպես օրինակ Եվրոպական միության մասնագիտական կրթության և ուսուցման որակի ապահովման ընդհանուր շրջանակը, գնալով ավելի ազդեցիկ դեր են խաղում որակի կառավարման առաջխաղացման հարցում, թե՛ ազգային, և թե՛ իրականացնողների մակարդակներով:

ՄԿՈՒ իրականացնողների գործառնական համակարգերը, որպես որակի կառավարման հիմք

Երիտասարդների և մեծահասակների համար մասնագիտական կրթության և ուսուցման վերաբերյալ օրինագիծը մեծ իրավունքներ է տալիս ՄԿՈՒ իրականացնողներին ՄԿՈՒ ապահովման, այդ նպատակով շնորհված միջոցների օգտագործման և որակի կառավարմանը վերաբերող հարցերում: Օրենքը պարտադրում է իրականացնողներին գնահատել իրենց ՄԿՈՒ պայմանները և դրանց արդյունավետությունը և մասնակցել իրենց աշխատանքների արտաքին գնահատմանը: Գնահատման օրենքով սահմանված պարտականությունը կատարելու համար տրամադրողները պետք է ունենան գործառնական համակարգեր, որոնք ներառում են որակի կառավարման համապատասխան և արդյունավետ գործընթացներ: Այս ամենը յուրաքանչյուր իրականացնող կարող է որոշել ինքնուրույն:

Այս փաստաթղթում գործառնական համակարգը ներկայացված է որպես որակի կառավարման տարբեր միջոցներից և մեթոդներից բաղկացած մի ամբողջություն, որն օգտագործվում է, որպեսզի ՄԿՈՒ իրականացնողների կազմակերպության ներսում կիրառեն որակավորման հստակեցված սկզբունքներ: Համակարգը վերաբերում է իրագործողներին և բաղկացած է կազմակերպության ներսում դիտարկվող կանոններից և ընթացակարգերից: Այն կարող է փաստագրվել որակավորման ձեռնարկում, բայց ձևակերպումից առավել կարևոր է այն, որ համակարգը գործնականում է աշխատում և խրախուսում է համակարգված գործողությունն ու զարգացումը:

Մասնագիտական կրթության և ուսուցման ազգային վերահսկումը, որպես որակի կառավարման մաս

Մասնագիտական կրթության և ուսուցման ազգային վերահսկման խնդիրն է հետևել, որ ՄԿՈՒ հիմնադրամի և դրա որակի վերաբերյալ խնդիրները լուծում ստանան: Ի լրումն գործառնությունների և ֆինանսավորումը վերահսկող օրենքների, որակի կառավարման հիմնական վերահսկող միջոցներից են կառավարության կողմից ընդունված Կրթության և Հետազոտությունների զարգացման ծրագիրը, պետական բյուջեն, մասնագիտական կրթություն և ուսուցում իրականացնելու լիազորությունները, որակավորումների կառուցվածքը և բարձր միջնակարգ մասնագիտական կրթության և ուսուցման ազգային միասնական ուսումնական ծրագրերը, իրավասության վրա հիմնված որակավորումների պահանջների չափորոշիչները գործառնությունների ֆինանսավորումը և կատարողականակենտրոն ֆինանսավորումը, որակավորման պահանջներ ուսուցողական անձնակազմի համար, ինչպես նաև զարգացնող և տեղեկատվական ծառայությունների միջոցով կրթական ղեկավարության ուղղորդումը:

Կրթության և ուսուցման արտաքին գնահատում

Կրթության և ուսուցման արտաքին գնահատման նպատակն է հետևել, որպեսզի մասնագիտական կրթությունը և ուսուցումը վերահսկող օրենքը գործի, ինչպես նաև աջակցել դրա զարգացմանը և բարելավել ուսման պայմանները: ՄԿՈՒ իրականացնողները պարտավոր են մասնակցել իրենց գործառնությունների արտաքին գնահատմանը:


Արտաքին գնահատումը կազմակերպվում է Ֆինլանդիայի կրթության գնահատման խորհրդի կամ Կրթության նախարարության կողմից նշանակված որևէ այլ վերահսկող մարմնի կողմից: Գնահատումները սովորաբար հիմնվում են զարգացման կողմնորոշում ունեցող սկզբունքի վրա, որի նպատակն է աջակցել ՄԿՈՒ իրականացնողներին կատարելագործել իրենց գործունեությունը և կուտակել տեղեկատվություն, որը կօգնի կրթական գործընթացի կազմակերպիչներին կայացնել որոշումներ:

Որակի կառավարման աջակցությանն ուղղված Եվրոպական համագործակցություն

Եվրոպական միության ներքին փոխհամագործակցությունը ավելի ու ավելի մեծ ազդեցություն է թողնում մասնագիտական կրթության և ուսուցման որակի կառավարման զարգացման վրա: Որակի ապահովման համընդհանուր ծրագիրը, որը մասնագիտական կրթության և ուսուցման որակի ապահովմանն աջակցելու համար զարգացել է որպես Կոպենհագենյան գործընթացի մի մաս, օգնում է զարգացնել, վերահսկել, գնահատել և բարելավել տարբեր մակարդակներում գտնվող որակի կառավարման համակարգերն ու գործառույթները համընդհանուր մոտեցման և որոշակի գործիքների միջոցով:

Ինչպես գնահատման շատ ուրիշ մոդելներ (ինչպես Որակի Կառավարման Եվրոպական Ֆոնդը կամ Ապահովման Համընդհանուր Շրջանակը (EFQM and CAF)), Որակի ապահովման ընդհանուր շրջանակի մոդելը հիմնված է շարունակական ուսուցման և աշխատանքի համակարգված կատարելագործման վրա: Մոդելի հիմքում ընկած մոտեցումը տևական կատարելագործումն է, որը հայտնի է Դեմինգի շրջան անվամբ (նախագծել, կատարել, ստուգել, գործել): Մոդելը ուղղորդում է ՄԿՈՒ իրականացնողներին ուշադրություն դարձնել այն հարցերին, որոնք որակի առումով կարևոր են, բայց այն չի տալիս պատասխաններ, թե իրագործողներն ինչպես պետք է գործեն:

Որակի կառավարման ընդհանուր ծրագրի մոդելը կարող է կիրառվել որպես որակի կառավարման ծրագիր ՄԿՈՒ ազգային համակարգի և ՄԿՈՒ անհատ իրականացնողների համար: Շահառուների ներգրավումը չափազանց կարևոր է համակարգերի և գործառույթների որակի բարձրացման հարցում: Առաջին նկարում ներկայացված են որակի գնահատման փուլերը:



Նկար 1: Որակի կառավարման ընդհանուր ծրագիր

Միջոցի բաղկացուցիչ մասերն են նախագծումը, իրագործումը, գնահատումը և հետազոտումը (արձագանքներ և փոփոխության ընթացակարգերը), որից յուրաքանչյուրը ունի որակի մի շարք չափանիշներ: Տարբեր անդամ երկրներ մասնագիտական կրթության և ուսուցման որակի ապահովման և բարելավման համար տարբեր մոդելներ են ընտրել: Այդ պատճառով մոդելը ներկայացնում է որակի հիմնական չափանիշներ, որոնք կարող են կիրառվել տարբեր աշխատանքային միջավայրերում: Մոդելն առաջադրում է հարցեր, որպեսզի ուշադրություն սևեռի որակի կարևոր գործոնների վրա:

Նախագծումը ներառում է օրինակարգերի, ընթացակարգերի, խնդիրների և մարդկային ռեսուրսների վերաբերյալ հստակ, համապատասխան և հասանելի նպատակներ և խնդիրների առաջադրում:

Իրագործման գլխավոր կողմը ընթացակարգերի հիմնումն է, որոնք կօգնեն հասնել դրված նպատակներին և լուծել խնդիրները: Ընթացակարգերը կարող են տարբերվել կախված իրագործողի մակարդակից, օրինակ՝ գործառնական համակարգերի և կազմակերպչական կառուցվածքի զարգացման, ռեսուրսների բաշխման, շահառուների ներգրավման, կամ համագործակցության աճի առումներով:

Վերլուծումը և գնահատումը ներառում են ՄԿՈՒ Իրագործման վերլուծում և համակարգչային և անհատական մակարդակներում արդյունքների գնահատում: Ընդհանուր առմամբ, վերլուծման և գնահատման փուլը բաղկացած է երկու մասերից՝ տվյալների հավաքագրում, քննարկում և մշակում, և այդ տվյալների վերլուծում և գնահատում: Վերլուծումը պահանջում է վերլուծող մեխանիզմի մշակում և նրա սահմանների որոշում, ինչպես նաև վերլուծման արդյունքների վերաբերյալ տեղեկատվության հաղորդում:

Արձագանքների և փոփոխության ընթացակարգերի փուլը մաս է կազմում շարունակական և նպատակային մի գործընթացի, որը փոխում է նախագծերը ու զարգացնում գործառույթներ նպատակային արդյունքների հասնելու և նոր նպատակներ առաջ քաշելու համար: Այս փուլում գլխավոր նպատակը տարբեր միջոցներով ստացված տեղեկատվությունից սովորելն է, օրինակ՝ ստացված արդյունքներից, քննարկելով և վերլուծելով դրանք հիմնական շահառուների հետ: Հնարավոր է նաև սովորել լավագույն փորձից, համեմատելով սպառողի սեփական գործառույթները դրանց հետ:

Մեթոդողովաները կարող են տարբեր լինել: ՄԿՈՒ Իրագործողների համար կարևոր է որոշել, թե որ տեսակի մեթոդը կբավարարի նրանց պահանջները: Որակի գնահատման և կառավարման համար կարևոր է ինքնագնահատումը համատեղել արտաքին գնահատման հետ: Մյուս կարևոր տեսակները վերաբերում են նրան, թե ինչպես և ինչ դերում են սպառողները և շահառուները (ինչպես օրինակ կազմակերպությունները, աշխատատեղերը, ուսանողները, այլ հեղինակությունները) մասնակցում գնահատմանը, և ինչն է նրանց մղում պատասխանատվություն կրել գնահատման համար: Կարևոր է նաև որոշել այն մեթոդները, որոնք օգտագործվում են տվյալների հավաքագրման, վերլուծման և եզրակացություն կազմելու համար:


Որակի գնահատման ընդհանուր ծրագրի միջոցը պատկանում է որակի կառավարման և գնահատման ներկայումս կիրառվող մեթոդների շարքին և դրա տարբեր փուլերում կարելի է կիրառել նաև գոյություն ունեցող այլ մեթոդներ:

3. Որակի կառավարման խորհրդատվության կառուցվածքն ու նախադրյալները

Որակի կառավարման ստորև ներկայացված խորհրդատվությունները բաժանված են մասերի ըստ գերազանց կազմակերպվածության բնութագրությունների: Խորհրդատվությունների յուրաքանչյուր բաժին, իր հերթին, խմբավորված է որակի կառավարման ընդհանուր ծրագրի տարբեր փուլերի համաձայն: Յուրաքանչյուր բաժին ներկայացնում է խորհրդատվություններ կապված միջոցի տարբեր փուլերի հետ՝ նախագծում, իրականացում, վերլուծում և գնահատում, ինչպես նաև հետադարձ կապ և փոփոխության ընթացակարգեր (տես ստորև աղյուսակ 1):

Խորհրդատվությունները այնպես են պատրաստվում, որ կարող են կիրառվել ՄԿՈՒ իրագործող տարբեր տեսակի կազմակերպությունների կողմից: Բացի այդ, դրանք հաշվի են առնում մասնագիտական կրթության և ուսուցման առանձնահատկությունները, հիմնական առավելությունները և զարգացման կետերը, ազգային ռազմավարությանը համապատասխան սահմանմամբ:

Բացի խորհրդատվություններից, փաստաթուղթը նաև սահմանում է ՄԿՈՒ իրագործողներին օգնող տեխնիկական բնութագրեր և օրինակներ, որպեսզի խորհրդատվությունները գործի դրվեն: Օրինակները բնութագրական են և չեն ներառում մասնագիտական կրթության և ուսուցման բոլոր ձևերն ու իրավիճակները:



Նախագծում, իրագործում, վերլուծում և գնահատում, հետագոտում (արձագանքներ և փոփոխության ընթացակարգեր)

Աղյուսակ 1: Որակի կառավարման խորհրդատվության կառուցվածք

Խորհրդատվությունները հիմնականում ստեղծված են աջակցելու ՄԿՈԻ իրագործողների և նրանց միավորների աշխատանքը, բայց դրանք հաճախ խոչընդոտ են հանդիսանում մյուս կողմերի համար, որոնք պատասխանատու են նաև կրթության և ուսուցման որակի համար: Յուրաքանչյուր իրագործող ընտրում է գործնականում խորհրդատվությունների կիրառմանը հարմար ձևեր: Սա պահանջում է համագործակցություն մյուս կողմերի հետ:

4. Մասնագիտական կրթության և ուսուցման որակի կառավարման խորհրդատվություններ

1. Ֆունկցիաների դիտարկումը՝ որպես մեկ ամբողջություն

Գործառնական համակարգը օգնում է ՄԿՈԻ անցկացնողներին զարգացնել և վերահսկել իրենց գործողությունները, որպես իրենց նպատակներին տանող ամբողջություն: Դրա շնորհիվ տրամադրողները կարող են վստահ լինել, որ պայմանավորված նպատակներն ու խնդիրները ստանում են գործնական կիրառություն կազմակերպության բոլոր ոլորտներում (սպառողներ, ֆինանսներ, մարդիկ, գործընթացներ) և մակարդակներում (գործառնական միավորներ, ՄԿՈԻ դաշտեր, ձևեր և ծառայություններ) և արդյունքները սխտեմատիկորեն գնահատվում և բարելավվում են: Գործառնական համակարգը բնութագրվում է այն փաստով, որ այն փոխվում և զարգանում է գործող միջավայրի ներսում: Նաև ինքնին համակարգը հանդիսանում է շարունակական գնահատման և բարելավման թիրախ:

Գնահատումը ՄԿՈԻ անցկացնողների գործառնական համակարգի կարևոր մասն է կազմում: Օրենքը պահանջում է կրթություն և ուսուցում անցկացնողներին գնահատել իրենց պաշարը և դրա արդյունավետությունը: Բացի այդ, նրանք պետք է մասնակցեն իրենց աշխատանքների արտաքին գնահատմանը: Յուրաքանչյուր իրագործող որոշում է իր գնահատման նպատակները, սկզբունքները և իրականացումը, ինչպես օրինակ ընթացակարգերը և գրաֆիկը: Նրանք նաև ազատ են որոշել, թե ինչպես այլ գնահատումներում օգտագործել ինքնագնահատման արդյունքները, և համապատասխանաբար, ինչպես կարող են այլ գնահատումների արդյունքներ օգնել իրենց ինքնագնահատմանը: Նրանք նաև կարող են հետևել այլ կազմակերպությունների գնահատումների արդյունքներին և որոշել ինչ օգուտ քաղել դրանցից իրենց աշխատանքը զարգացնելու համար:

Նախագծում

Յուրաքանչյուր ՄԿՈՒ իրականացնող ունի փաստագրված գործառնական համակարգ, որը կիրառվում է աշխատանքների նախագծման և վերահսկման համար, և որի միջոցով օգտվողներին, անձնակազմին և հիմնական շահառուներին կարելի է տալ տեղեկատվություն արժեքների, նպատակների, աշխատանքի հիմնական խնդիրների վերաբերյալ: Գործառնական համակարգը նաև ներառում է դրանց զարգացմանն օգնող գործընթացների, կազմակերպչական կառուցվածքների և մոտեցումների բնութագրություն:

ՄԿՈՒ տրամադրողները

- Որպես ամբողջություն նախագծում և վերահսկում են տարբեր ՄԿՈՒ ֆունկցիաներ, ձևեր և դրանց մասերի աշխատանքներ, որպեսզի դրանք օգնեն հասնելու ընդհանուր նպատակներին
- Հետևում են, որպեսզի որակի կառավարումը իրենց ռազմավարական նախագծման և ամենօրյա գործունեության մի մասը լինի
- Ներառում են իրենց գործառնական համակարգի մասը հանդիսացող կայուն զարգացման ծրագիր, որպեսզի վերահսկեն նպատակների իրագործումը և բնապահպանական խնդիրների, հասարակական պատասխանատվության, աշխատանքի անվնասության և ապահովության, անձնակազմի և ուսանողների բարեկեցության վերաբերող հարցերը:
- Նախագծում և վերահսկում են աշխատանքներ գործառնական շղթաների, այսինքն՝ իրենց հիմնական նպատակի վրա հիմնված գործընթացների միջոցով
- Էլեկտրոնային համակարգում փաստագրում են հիմնական ընթացակարգերը, գործընթացները և ուղեցույցները, որոնց պահպանությունը ապահովվում է
- Իրենց աշխատանքային ոլորտի հիմնական շահառուներին տեղեկացնում են իրենց գործառնական համակարգի և դրա հիմնական սկզբունքների և ընթացակարգերի մասին:

ՄԿՈՒ տրամադրողները սահմանել և ուրվագծել են մի համակարգ և ծրագրում են ուսումնասիրել և գնահատել այն աշխատանքները և արդյունքները, որոնք ներառում են վերահսկման և գնահատման վերաբերյալ բոլոր հիմնական ռազմավարական խնդիրները, սկզբունքները և ուղեցույցները, ինչպես նաև ներառված գրաֆիկներն ու պատասխանատվությունները:

ՄԿՈՒ տրամադրողները

- Ստեղծում են համաձայնեցված սկզբունքներ իրենց աշխատանքները և տարբեր միավորներ գնահատելու համար
- Ստուգում են, որպեսզի հավաքվի և փաստագրվի աշխատանքի գնահատման հետ կապված ինֆորմացիա տարբեր կարիքների համար (ինչպես օրինակ ազգային գնահատում, վերահսկում, ուսումնասիրություն և հմտությունների ցուցադրություն)
- Սահմանել են, թե ինչպես պետք է վերլուծել, համատեղել և օգտագործել տարբեր աղբյուրներից ձեռք բերված գնահատման տվյալները

Իրականացում

ՄԿՈւ տրամադրողները գործում են իրենց գործառնական համակարգի շրջանակում նշված նպատակների համաձայն և իրենց էլակետից սկսած շարունակաբար բարելավում են իրենց աշխատանքը:

ՄԿՈՒ տրամադրողները

- Իրականացում են իրենց սկզբունքները և ռազմավարությունը հիմնական գործընթացների միջոցով
- Վերահսկում են իրենց աշխատանքը և աշխատող միավորները հիմնական սկզբունքներին համաձայն
- Ավելացնում են իրենց կրթական և ուսուցողական պաշարը, աշխատանքի ձևերը և կազմակերպչական կառուցվածքը, որպեսզի դա բավարարի աշխատանքային ոլորտի տարբեր բաժինների համար պահանջվող հմտությունների պահանջը
- Հայտնում են իրենց անձնակազմին, որ որակի կառավարումը կրթող և ուսուցանող կազմակերպությունում աշխատող յուրաքանչյուրի աշխատանքի մի մասն է կազմում
- ստուգում են, որպեսզի բոլոր գործունեություններում հաշվի առնվի կայուն զարգացման սկզբունքը

ՄԿՈՒ տրամադրողները օգտագործում են գնահատման տարբեր մեթոդներ և տվյալներ իրենց աշխատանքը բարելավելու համար

ՄԿՈՒ տրամադրողները

- հավաքում և վերլուծում են գնահատման արդյունքներ և հետադարձ տեղեկատվություն
- օգտագործում են այլ գնահատումների արդյունքները, օրինակ՝ ազգային գնահատման պատասխանները
- կատարում են իրենց աշխատանքների արտաքին գնահատում ամենաքիչը երեք տարին մեկ
- բարելավում են իրենց աշխատանքը ներքին աուդիտների միջոցով
- համագործակցում են կրթող և ուսուցանող այլ կազմակերպությունների հետ, օրինակ, կատարելով համեմատություններ և մասնագիտական գնահատումներ:

Հետազոտում. Արձագանքներ և փոփոխության ընթացակարգեր

ՄԿՈՒ տրամադրողները կանոնավոր կերպով վերահսկում և վերլուծում են իրենց գործառնական համակարգերի արդյունավետությունը և անհրաժեշտության դեպքում մտցնում փոփոխություններ:

ՄԿՈՒ տրամադրողները

- կանոնավոր կերպով ստուգում են իրենց գնահատման համակարգի արդյունավետությունը և բարելավում գնահատումը ազգային գնահատման սկզբունքին համաձայն

- Գնահատման արդյունքների վերլուծության հիման վրա որոշում են բարելավման համար անհրաժեշտ հետագա քայլերը և պատրաստում դրանց նախագիծը, սահմանելով համապատասխան գրաֆիկներ և պատասխանատվություններ
- Համագործակցում են կրթող և ուսուցանող այլ կազմակերպությունների հետ, իրենց գնահատման համակարգը զարգացնելու նպատակով
- Վերահսկում են, որպեսզի իրենց աշխատանքի վերաբերյալ փաստաթղթերը թարմացվեն և պահանջին համաձայն ամփոփում դրանք:

2. Սպառողակենտրոն մոտեցում

ՄԿՈԻ տրամադրողների աշխատանքային ողջ ընթացքի մեջ տեսանելի են սպառողակենտրոն մոտեցումը և աշխատանքային ոլորտի հանդեպ վերաբերմունքը: Սպառողները կրթության և ուսուցման որակի և այլ ծառայությունների միակ դատավորներն են: Նրանք կարող են լինել ՄԿՈԻ իրագործողի արտաքին սպառողներ (օրինակ, ուսանողներ, կազմակերպություններ և այլ աշխատատեղեր, ֆինանսավորող մարմիններ և հասարակություն) կամ ներքին սպառողներ: Վերջինները կապ ունեն կազմակերպության ներքին գործընթացների հետ, օրինակ՝ անձնակազմի: Օրինակ, ուսանողական գործերի բաժինը մատուցում է ծառայություններ ուսուցչական անձնակազմին:

Լավագույն ՄԿՈԻ տրամադրողներ հաստատում են հարաբերություններ և փոխհամագործակցում, որպեսզի հնարավորինս լավագույն կերպով սպասարկեն իրենց սպառողների տարբեր խմբերին: Սպառողների վրա շեշտ դնելը, այլ բաների հետ մեկտեղ, ենթադրում է նաև սպառողական տարբեր խմբերի վերահսկում և բավարարվածության կամ անբավարարվածության ակնկալում, ինչպես նաև ստացած արդյունքների վրա հիմնված գործունեությունների բարելավում: Իրագործողների համար նաև շատ կարևոր է հետևություններ անել և սովորել սպառողների բացասական կարծիքների վրա:

Նախագծում

ՄԿՈԻ տրամադրողները որոշում են հիմնական սպառողներին և նրանց ներկայիս և ապագա պահանջները և սպասումները: Նրանք հաշվի են առնում այդ ամենը տարբեր սպառողական խմբերի համար ծառայություններ և արտադրանք նախագծելիս և մշակելիս:

ՄԿՈԻ տրամադրողները

- Որոշում են արտաքին և ներքին սպառողներին, բաժանում սպառողական տարբեր խմբերի և հաշվի են առնում յուրաքանչյուր խմբի կարիքներն ու ակնկալիքները, կրթման, ուսուցման և այլ ծառայություններ նախագծելիս, երբ համագործակցում են հիմնական ՄԿՈԻ շահառուների հետ (օրինակ աշխատանքային ոլորտի) :

- Որոշում են հեռանկարային և հնարավոր ուսանողների կարիքները և համագործակցում հիմնական շահառուների հետ (համապարփակ դպրոցներ, ընդհանուր բարձր միջնակարգ դպրոցներ, մեծահասակների կրթության ազատական հաստատություններ, ինչպես նաև աշխատանքի կազմակերպիչը)
- Կանոնավոր կերպով օգտվել կանխատեսված տվյալներից և ակնկալել աշխատանքային ոլորտի և շահառուների կարիքները, նախագծել կրթման, ուսուցման և զարգացման ծառայություններ ըստ այդ ակնկալիքների պատասխանների:
- Առաջադրել հստակ և լուծելի խնդիրներ սպառողական յուրաքանչյուր խմբի համար և տարբեր ուսանողների (օրինակ, հատուկ կարիքավոր ուսանողների, գործազուրկ աշխատանք փնտրողների, լավագույն մասնագետների) համար նախագծել անհատական կրթական լուծումներ հիմնված նրանց կարիքների և ընտրված ռազմավարության վրա:
- Կրթության, ուսուցման և այլ ծառայությունների զարգացման գործում ներառել սպառողական տարբեր խմբեր:

Իրականացում

ՄԿՈԻ տրամադրողները հաշվի են առնում սպառողական տարբեր խմբերի կարիքների և ակնկալիքների ամբողջությունը կրթական, վերապատրաստող և զարգացման այլ ծառայություններ կիրառելիս:

ՄԿՈԻ տրամադրողները

- Հաշվի են առնում սպառողական տարբեր խմբերի (երիտասարդներ, մեծահասակներ, աշակերտներ, ներգաղթողներ, հատուկ կարիքավոր ուսանողներ, գործազուրկ աշխատանք փնտրողներ, աշխատանք առաջարկողներ) կարիքները ուսման պատրաստությունների, սովորելու միջավայրի և ֆինանսական և մարդկային ռեսուրսների վերաբերյալ որոշումներ կայացնելիս
- Ստեղծում են ընթացակարգեր, որոնք թույլ են տալիս պաշարել կրթության, ուսուցման և զարգացման ծառայություններ անհատական կարիքների հիմունքով (նախկին ուսուցման ճանաչում և բոլոր ծրագրերի անհատականացման տևական իրականացում)
- Մշակում են ընթացակարգեր, որոնք հնարավորություն կտան կազմակերպություններին և այլ աշխատատեղ ապահովողներին, ուսանողներին և այլ շահառուներին ակտիվ դեր ունենալ աշխատանքների և դրանց զարգացման հարցում
- Մշակում են ընթացակարգեր ուսանողների բարեկեցությանը վերաբերող հարցերին մասնակցելու համար, այսպիսով ամրացնելով միասնականության ոգին
- Խրախուսում են ուսանողներին արտահայտել կարծիքներ նրանց համար ստեղծելով հնարավորություններ մասնակցելու կրթության և ուսուցման նախագծմանը և կիրառմանը և աջակցելով նրանց համագործակցություններին (ուսանողական կազմակերպությունների գործունեություններ)
- Հետևում են, որպեսզի անձնակազմի անդամները տեղյակ լինեն կրթության և ուսուցման ծառայությունների պաշարի իրենց դերից և բարձրացնեն ծառայությունների որակը

համագործակցելով կրթական և ուսուցման կազմակերպությունում աշխատող մյուս մարդկանց հետ

Հետազոտում. Արձագանքներ և փոփոխության ընթացակարգեր

ՄԿՈԻ տրամադրողները ձեռք են բերում գործունեության վերաբերյալ տեղեկություններ տարբեր սպառողների մասին և տարբեր միջոցներով, և օգտագործում են դրանք ծառայությունները և աշխատանքները մշակելիս:

ՄԿՈԻ տրամադրողները

- Կանոնավոր կերպով վերահսկում են տարբեր սպառողական խմբերին վերաբերող խնդիրների լուծումը օգտագործելով հատուկ ցուցիչներ
- Կանոնավոր կերպով հավաքում են կարծիքներ տարբեր սպառողական խմբերի ընկալումներով (ուսանողների և աշխատողների գոհունակություն), օգտագործելով դրանք կրթության, ուսուցման և այլ ծառայությունների և գործողությունների բարելավման համար
- Վերահսկում և ակնկալում են կարճատև և երկարատև փոփոխություններ պահանջելով աշխատանք, որակավորում ունեցողների զբաղվածության աստիճան, կրթության և ուսուցման պահանջարկ և առաջարկ, օգտագործում են այդ տեղեկատվությունը մատակարարելով կրթական և ուսուցման ծառայություններով
- Հետևում են, որպեսզի մասնագիտական կրթությունը և ուսուցումը հետաքրքիր լինեն և ակտիվ դեր են խաղում այն ավելի գրավիչ դարձնելու հարցում

3. Առաջնորդություն

Առաջնորդությունը մեծ դեր է խաղում բարձր որակի ՄԿՈԻ ծառայությունների և աշխատանքների շարունակական բարելավման հարցում: ՄԿՈԻ իրագործողների աշխատանքների համակարգված լավացման համար դեկավարությունից պահանջվում է կազմակերպչական հստակ կողմնորոշում և պայմանների ստեղծում համապատասխան աշխատանքի համար: Ղեկավարությունը կանոնավոր կերպով իրականացում է գործառնական համակարգի վերաբերյալ հավաքված տեղեկատվությունը և դրա վերաբերյալ ցանկացած փոփոխություն որոշումներ կայացնելու համար: Համապատասխան նպատակներ դնելու համար պետք է ակտիվ կերպով համագործակցել աշխատանքային և բիզնես աշխարհի ներկայացուցիչների, կրթական և ուսուցողական այլ իրագործողների, ինչպես նաև մասնագիտական կրթության և ուսուցման շահառուներ և կողմերի հետ: Բացի այդ, դրա համար պետք է ունենալ համեմատական տվյալներ:

Նախագծում

ՄԿՈԻ տրամադրողները շարունակական հիմքով հսկում և ակնկալում են թե՛ ներքին, և թե՛ արտաքին աշխատանքային միջավայրերում առաջացող փոփոխությունները, և օգտվում այդ տեղեկատվությունից աշխատանքի նախագծման ժամանակ:

ՄԿՈՒ տրամադրողները

- Ծանոթ են մասնագիտական կրթությանը և ուսուցմանը վերաբերող հիմնական տարածաշրջանային, ազգային և եվրոպական խնդիրներին
- Ակնկալում են փոփոխություններ, որոնք տեղի են ունենում բիզնեսի, աշխատանքային ոլորտներում, դեմոգրաֆիական միտումներում և հասարակության մեջ և տանում են ակնկալական աշխատանքներ համագործակցելով այլ կրթող և վերապատրաստող իրագործողների և այդ ոլորտում աշխատող հաստատությունների, բիզնեսային և այլ աշխատող կազմակերպությունների, ինչպես նաև մյուս շահառուներ հետ:
- Պարբերաբար հավաքում են իրենց սեփական աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն և օգտագործում ոլորտի ուսումնասիրության արդյունքները իրենց գործում
- Հետևում են, թե ինչպես են իրենց ոլորտին համապատասխան ՄԿՈՒ իրագործողների աշխատանքը և աշխատանքային ոլորտի ներկայացուցիչները ղեկավարող օրենքները, ուղեցույցները և խորհրդատվությունները փոխում իրենց աշխատանքը և ազդեցություն թողնում աշխատանքի վրա

ՄԿՈՒ տրամադրողները իրենց անձնակազմի հետ համատեղ որոշում են իրենց առաքելությունը, տեսլականը և արժեքներն ու սկզբունքները, որոնցով առաջնորդվում են աշխատելիս

ՄԿՈՒ տրամադրողները

- Մշակում են որակի կառավարման բավականաչափ հետևողական սկզբունքներ իրենց գործունեության, աշխատանքային տարբեր միավորների և տարբեր ՄԿՈՒ ձևերի համար
- Ստուգում են, որպեսզի իրենց կազմակերպությունը կենտրոնանա աշխատանքի վրա համաձայն իրենց հիմնական առաքելության
- Ստուգում են, որպեսզի իրենց աշխատանքային տարեկան պլանը հիմնված լինի առաքելության, տեսլականի, արժեքների և ռազմավարական խնդիրների վրա
- Հատկացնում են նյութեր և մարդկային ռեսուրսներ համաձայն իրենց նպատակների, գործառնական փոփոխությունների և զարգացման գերակայությունների

Իրականացում

ՄԿՈՒ տրամադրողները նախագծում, վերահսկում և մշակում են գործունեություն, որը հիմնվում է գործառնական համակարգերի վերլուծությունից ստացած տեղեկատվության վրա:

ՄԿՈՒ տրամադրողները

- Օգտագործում են աշխատանքային միջավայրի վերլուծության միջոցով ստացած տեղեկատվությունը, իրենց ռազմավարությունը և ամենամյա աշխատանքային և ֆինանսական պլանը կազմելիս

- Իրենց առաքելության, տեսլականի, արժեքների և ռազմավարական խնդիրների վրա հիմնվելով կազմում են իրագործողների և միավորների մակարդակներով ամենամյա նպատակներ

ՄԿՈԻ տրամադրողները հետևում են, որպեսզի առաջնորդության միջոցով լուծվեն հստակեցված նպատակները և խնդիրները և պայմաններ են ստեղծում աշխատանքի շարունակական բարելավման համար

ՄԿՈԻ տրամադրողները

- Ստուգում են, որպեսզի ղեկավարմանը աջակցի թարմացված գործառնական համակարգը
- Հետևում են, որպեսզի աշխատանքային և միավորային մակարդակների կառավարումը համապատասխանի համատեղ համաձայնեցված սկզբունքներին
- Մշակում են կազմակերպչական կառույց, որը կօգնի հասնել դրված նպատակներին
- Հետևում են, որպեսզի կառավարման պատասխանատվությունները լինեն հստակորեն սահմանված համաձայն, օրինակ, մանկավարժական կառավարման
- Տեղեկացնում են անձնակազմին սպառողներին և գործընկերներին արժեքների, հստակեցված նպատակների և հասած արդյունքների մասին
- Աջակցում և խրախուսում են անձնակազմին հասնել դրված նպատակներին և զարգանալ անձնապես

ՄԿՈԻ տրամադրողները, իրենց աշխատանքային միավորները և անձնակազմը գործում են համաձայն առաքելության, տեսլականի, արժեքների և սկզբունքների և պարտավորվում են շարունակաբար բարելավել դրանք

ՄԿՈԻ տրամադրողները

- Արդյունավետ և բավարար կերպով տեղեկացնում են անձնակազմին առաքելությունների, տեսլականի և սկզբունքների մասին
- Ստուգում են, որպեսզի ղեկավար անձինք իրենց իսկ քայլերով ներդնում ունենան աշխատանքային միջավայրի և մթնոլորտի մեջ, որը կաջակցի նպատակների իրականացմանը
- Ստուգում են, որպեսզի տարբեր միավորումներ, ՄԿՈԻ տեսակներ և աշխատանքներ (օրինակ, որակի կառավարում) համապատասխանեն համատեղ համաձայնեցված սկզբունքներին
- Բոլոր գործունեություններում հաշվի են առնում կանոնավոր զարգացման սկզբունքները

Հետազոտում. Արձագանքներ և փոփոխության ընթացակարգեր

Ղեկավարության, տեսլականի, արժեքների գնահատումը և ռազմավարական խնդիրների լուծումը կանոնավոր ինքնագնահատման մաս են կազմում: ՄԿՈԻ տրամադրողները ստանում են նաև զարգացմանն աջակցող այլ հետադարձ կարծիքներ և տեղեկատվություն:

ՄԿՈԻ տրամադրողները

- Ակտիվ կերպով ստուգում են կատարողականությունը և արդյունավետությունը այնպիսի միջոցներով ինչպիսիք են աշխատանքի վրա հիմնված ֆինանսավորման ազգային ցուցիչները, կիրառելով տեղեկատվություն, որը ստացվել է աշխատանքային թիրախները վերանայելու և գործունեությունը զարգացնելու համար
- Միստեմատիկորեն ստուգում և գնահատում են որակի կառավարման սկզբունքների իրականացումը

4. Արդյունակենտրոն մոտեցում

Հաջող և արդյունավետ կրթությունը և ուսուցումը պահանջում են հստակ և իրատեսական նպատակներ: ՄԿՈԻ տրամադրողները հստակեցնում են այն արդյունքները, որոնց ուզում են հասնել և իրենց աշխատանքի առջև դնում են նպատակներ: Այդ անելիս նրանք հաշվի են առնում ազգային ՄԿՈԻ խնդիրները, տեղական գործող միջավայրը (ներառյալ կազմակերպություններ, այլ աշխատատեղեր և ուսանողներ) և այլ շահառուների կարիքները: Այդ կարիքների վրա հիմնվելով տրամադրողները հաջորդիվ ընտրում են համապատասխան ընթացակարգեր:

Գնահատման նպատակն է ցույց տալ, թե աշխատանքի առջև դրված խնդիրները որքանով են լուծվել և ինչ առաջխաղացում են ունեցել: Գնահատումը խթանում է ՄԿՈԻ իրագործողներին շարունակաբար զարգանալ և ունենալ արդյունակենտրոն կատարողականություն: Գնահատման միջոցով տրամադրողները ստանում են տեղեկատվություն ուժեղ և զարգանալու կարիք ունեցող հիմնական կետերի մասին: ՄԿՈԻ տրամադրողները հսկում, գնահատում և վերլուծում են կանոնավոր արդյունքները, որոնք ստացվում են այնպիսի միջոցներով, ինչպես օրինակ տարբեր հարցումներ, քանակական ցուցիչներ և ինքնագնահատում: Մատակարարները և նրանց միավորումները իրենց հաջողությունների մասին զգալի տեղեկատվություն են ստանում սպառողներից և շահառուներից: Կարևոր է նաև հաշվի առնել սպառողների և շահառուների աշխատանքի և արդյունքների վերաբերյալ շարունակական տեղեկատվություն տալու հնարավորությունը: Մյուս կարևոր կողմը անմիջապես ստացվող կարծիքների իրականացումն է:

ՄԿՈԻ տրամադրողները օգտվում են նաև այլ կազմակերպություններից ստացած համեմատական տվյալներից: Նրանք ստուգում, որպեսզի կատարողականության տվյալները հասկանալի լինեն և ռազմավարական խնդիրների մասին իրենց ստացած տեղեկատվությունը լինի համապատասխան: Տրամադրողները իրականացում են կատարողականության տվյալները գործունեություններ զարգացնելիս կամ նոր թիրախներ որոշելիս:

Նախագծում

ՄԿՈԻ տրամադրողները իրենց աշխատանքի համար առաջադրում են դժվարին, նյութական, բայց հասանելի խնդիրներ հիմնվելով սպառողների կարիքների և սպասումների վրա: Արդյունակենտրոնության համար անհրաժեշտ է հավասարակշռված կերպով հաշվի առնել բոլոր հիմնական սպառողների և շահառուների պահանջները:

ՄԿՈԻ տրամադրողները

- Նպատակներ դնելիս հաշվի են առնում մասնագիտական կրթության և ուսուցման Եվրոպական զարգացման միտումները և ազգային խնդիրները
- Խնդիրներ սահմանելիս հաշվի են առնում կազմակերպություններ, տարբեր ուսանողներ, գործընկերների և այլ հիմնական շահառուների կարիքները
- Խնդիրներ սահմանելիս հաշվի են առնում կայուն զարգացման սկզբունքները
- Սահմանում են քանակական և որակական նպատակներ ողջ կազմակերպության և դրա միավորումների համար հիմնվելով դրանց ռազմավարության և հավանական ենթառազմավարությունների վրա:

Իրականացում

ՄԿՈԻ կիրառողները կազմակերպչական բոլոր մակարդակներում, ֆունկցիաներում և միավորումներում աշխատում են հատուկ նպատակների համար:

ՄԿՈԻ տրամադրողները

- Ստուգում են, որպեսզի աշխատանքի միավորումները և տեսակները կազմեն մեկ ամբողջություն, որը կաջակցի ռազմավարական խնդիրների լուծմանը
- Հետևում են, որպեսզի անձնակազմը տեղյակ լինի սահմանված նպատակներից և աշխատի դրանց համաձայն
- Աջակցում և ոգեշնչում են անձնակազմին հասնել դրված նպատակներին
- Հետևում են, որպեսզի իրավասության թեստերի մասնակիցները և ուսանողները հասնեն մասնագիտական այնպիսի իրավասության, որը սահմանվում է կարողությունները ստուգող որակավորումների Հիմնական ազգային ուսումնական պլանին համաձայն և ստանան ցկյանս ուսուցման սկզբունքներին համաձայն մասնագիտական զարգացման հնարավորություն
- Հետևում են, որպեսզի գրաֆիկները թարմացվեն, իրավասության թեստեր անցկացնելու համաձայնագրերը վավեր լինեն և կրթությունն ու ուսուցումը անցկացվի բարձր մակարդակով
- Քայլեր են ձեռնարկում, որպեսզի լուծեն բոլոր տարիքային խմբերին կրթելու և/կամ վերապատրաստելու խնդիրը, ապահովեն որակավորման ստացում, արդյունավետ աշխատող մարդկանց մասնագիտական հմտությունների զարգացում, ուսանողների աշխատանքի տեղավորում և հետագա ուսուցման շարունակում, սոցիալական

նպատակների իրականացում, սոցիալական բացառման կանխարգելում և կրճատման ցուցանիշների նվազեցում:

- Քայլեր են ձեռնարկում սոցիալական, էկոլոգիական, տնտեսական և մշակութային կայուն զարգացմանը աջակցելու համար
- Ակտիվ դերակատարում ունեն իրենց աշխատանքային ոլորտը և տեղական աշխատող կառույցը զարգացնելու հարցում

ՄԿՈՒ տրամադրողները պատրաստում են տեղեկատվության կառավարման ռազմավարություն էլնելով իրենց անձնական և իրենց միավորումների կարիքներից:

ՄԿՈՒ տրամադրողները

- Հետևում են, որպեսզի իրենց կազմակերպությունը և միավորումները իրենց տրամադրության տակ տեղեկատվություն ունենան աշխատանքների և դրանց կատարողականության մասին, ինչը հնարավոր է դարձնում հսկել ռազմավարական նպատակներին հասնելու գործընթացը
- Տեղեկատվական համակարգեր ստեղծելիս հաշվի են առնում տեղեկատվության ազգային համակարգերի, ինչպես օրինակ կատարողականության վրա շեշտադրված ֆինանսավորման կամ էլեկտրական կիրառման համակարգերի, ինչպես նաև իրենց սեփական կարիքները
- Հետևում են, որպեսզի էլեկտրական տեղեկատվական համակարգերը թարմացվեն և անձնակազմը ունենա բավարար հմտություններ դրանցից օգտվելու համար
- Հետևում են, որպեսզի ղեկավարությանը և այլ կողմերին ներկայացվող տեղեկությունները լինեն ճշգրիտ և արդիական:

Հետազոտում. արձագանքներ և փոփոխության ընթացակարգեր

ՄԿՈՒ տրամադրողները համակարգված և նպատակային կերպով հսկում և ստուգում են, որ կրթության և ուսուցման կազմակերպության բոլոր մակարդակներում և տարբեր գործողություններում դրված նպատակները իրագործվեն:

ՄԿՈՒ տրամադրողները

- Հավաքում են կատարողականության տվյալներ հեշտացնելու համար գործողությունների կառավարումը և զարգացումը նպատակային տարբեր ձևերով
- Հսկում են կատարողականությունը մի խումբ ցուցիչների միջոցով, որոնք ներառում են գործողությունների հիմնական կողմերը և տեղեկացնում են խնդիրների լուծումների և դրանց միտումների մասին
- Հետևում են, որպեսզի ընտրված ցուցիչները բաշխված լինեն գործողությունների բոլոր մակարդակներում և տարբեր միավորումներում
- Վերլուծում են արդյունքները և համեմատում դրանք իրենց ռազմավարության և գրաֆիկի մեջ ներառված նպատակների հետ, օրինակ, համապատասխան տեղեկատվական տվյալների և լավագույն գործնական փորձ

- Արդյունքներն ամփոփելիս և իրենց աշխատանքը գնահատելիս օգտագործում են այլ կազմակերպությունների մասին ստացված տեղեկատվությունից

ՄԿՈԻ տրամադրողները պարբերաբար հսկում և գնահատում են կրթության, ուսուցման և ուսումնական գործընթացների արդյունավետությունը:

ՄԿՈԻ տրամադրողները

- Իրենց աշխատանքի և դրա զարգացման համար օգտվում են մասնագիտական հմտությունների ցուցադրություններից, մասնագիտական թեստերից, ազգային գնահատումներից, և այլ հղումային տվյալներից ստացված տեղեկատվությունից
- Հսկում են ՄԿՈԻ կատարողականությունը բնութագրող ցուցիչները, օրինակ՝ կատարողականության վրա հիմնված ֆինանսավորման ցուցիչները
- Պարբերաբար տեղեկատվություն են հավաքում կազմակերպություններից և այլ աշխատատեղերից, ուսանողներից, այլ սպառողներից և գործընկերներից
- Հետևում են, որպեսզի անձնակազմը և ուսանողները մասնակցեն գնահատման նախագծմանն ու կիրառմանը և ստուգում են, որպեսզի նրանք ծանոթ լինեն գնահատման հիմնական մեթոդների հետ և ըմբռնեն նման գործողությունների կարևորությունը

ՄԿՈԻ տրամադրողները պարբերաբար գնահատում և լավացնում են իրենց տեղեկատվության կառավարման համակարգերը, որպեսզի ստանան կատարողականության արդիական և համապատասխան տեղեկատվություն:

ՄԿՈԻ տրամադրողները

- Պարբերաբար հետևում են տեղեկատվության հավաքմամբ զբաղվող հեղինակությունների կողմից թողարկված ուղեցույցներին (օրինակ, Ֆինլանդիայի վիճակագրություն և Ֆինլանդիայի կրթության ազգային խորհուրդ) և հսկում են, որպեսզի նրանց տեղեկատվական համակարգերը տան վստահելի տեղեկություններ, համաձայն տեղեկատվության հավաքման պաշտոնական ընթացակարգերի

ՄԿՈԻ տրամադրողները զարգացնում են իրենց աշխատանքը հիմնվելով տարբեր աղբյուրներից ստացված կատարողականության տվյալների վրա:

ՄԿՈԻ տրամադրողները

- Վերանայում են նախկինում սահմանված նպատակները և դնում նորերը հիմնվելով կատարողականության տվյալների վրա
- Հաղորդում են տեղեկատվություն գնահատման արդյունքների և զարգացման ծրագրերի վերաբերյալ

5. Շարունակական ուսուցում, նորարարություն և առաջխաղացում

Ուսանողների և աշխատանքային ոլորտի ներկայացուցիչների փոփոխվող հմտությունները և զարգացման կարիքները հոգալու համար ՄԿՈԻ տրամադրողները պետք է ըմբռնելի կերպով

սահմանեն անհրաժեշտ հմտությունները և իրենց աշխատանքային ռազմավարությունը հիմնեն շարունակական ուսուցման վրա: ՄԿՈԻ տրամադրողները պայմաններ են ստեղծում շարունակական ուսուցման և հմտության զարգացման, նորարարությունների և իրենց աշխատանքի բոլոր մակարդակներում հասած արդյունքների տարածման համար: Սպառողների պահանջները հոգալու համար տրամադրողները պետք է շարունակաբար զարգացնեն իրենց հիմնական հմտությունների ոլորտները և աշխատանքային գործընթացները:

Կատարելության ձգտելիս ՄԿՈԻ տրամադրողները պարբերաբար հետևում են այլ կազմակերպությունների աշխատանքներին և զարգացնում իրենց աշխատանքը մյուսների փորձից օգտվելով: Ուսուցանող կազմակերպության աշխատանքային մշակույթը ողջունում է նոր փորձերի իրականացումը, միևնույն ժամանակ հաշվի առնելով այն փաստը, որ դրանք կարող են չհամապատասխանել իրենց գործունեությանը: ՄԿՈԻ տրամադրողները կարող են զարգացնել իրենց ստեղծագործ և նորարական միտքը կազմակերպելով համագործակցության տարբեր տեսակներ, ինչպես օրինակ տարբեր սպառողական խմբերի համար միասնական ուսուցողական քննարկումներ:

Կազմակերպությունը զարգանում է անհատական ուսուցման միջոցով: Նորարարությունների ստեղծման ու կիրառման համար անհրաժեշտ է քննադատական վերլուծություն անել և անհրաժեշտության դեպքում հրաժարվել նախկին միջոցներից և սկզբունքներից:

Աճող ստեղծարարության և նորարարության սկզբնաղբյուրը ուսուցումը, զարգացումը և ստեղծարար միտքը զարգացնող մթնոլորտն ու աշխատանքային մշակույթն են: Ուսուցումը ներառում է նաև սխալների ընդունում և դրանց վրա սովորելու ունակություն: Գերազանց կազմակերպչական ընթացակարգերի համար անհրաժեշտ է կիսել և ստանալ կարծիքներ, գնահատել և շարունակաբար բարելավել աշխատանքը: Նախաձեռնելը, նորարար լինելը և նորարարական աշխատանքային մեթոդներ օգտագործելը ողջունելի են բոլոր կազմակերպությունների համար:

ՄԿՈԻ տրամադրողները ապահովում են կարծիքների և այլ կատարողական տվյալների օգտագործումը ստեղծելով արդյունավետ ընթացակարգեր, որոնք փոփոխության են հանգեցնում: Դրանք պետք է ամրագրվեն, որպեսզի անձնակազմը տեղյակ լինի թե որոնք են նրա հետագա քայլերը: Տրամադրողները հատուկ մարդկանց են նշանակում, որոնք պատասխանատու են փոփոխությունների և դրանց կիրառման գրաֆիկների համար: Նրանք հավաքում են անհրաժեշտ պայմաններ, որպեսզի փոփոխություններ մտցնեն և հետևեն դրանց զարգացման ընթացքին: Այսպիսով՝ հնարավոր է դառնում արդյունքներից ելնելով հսկել փոփոխությունների իրականացումը և զարգացումը : Օգտագործելով կարծիքներից ստացված տեղեկությունը և փոփոխություններ ներմուծելով, տրամադրողները սովորում են, թե ինչպես կարելի է լավացնել իրենց աշխատանքները:

Նախագծում

ՄԿՈՒ տրամադրողները այնպես են մշակում իրենց աշխատելաճը և կազմակերպչական կառուցվածքը, որ այն խթանում է շարունակական ուսուցումը, ստեղծագործումը և նորարարությունների իրականացումը:

ՄԿՈՒ տրամադրողները

- Ստեղծում են ընթացակարգեր, որպեսզի կատարողականության տվյալների աշխատանքային միջավայրի վերլուծության միջոցով հեշտությամբ գտնեն մշակման ենթակա կետերը, գնահատեն դրանք և օգտագործեն, որպես զարգացման նախագծերը պատրաստելու հիմք:
- Այնպես են մշակում իրենց մոտեցումները և կազմակերպչական կառուցվածքը, որպեսզի տարբեր կրթական, ուսուցողական և զարգացնող պարտականությունների ժամանակ ազատորեն օգտագործեն կազմակերպչական փորձը:
- Պայմաններ են ստեղծում իրենց անձնակազմի համար, տալով նրանց հնարավորությունն հետևել իրենց ոլորտի զարգացումներին և մասնակցել տարբեր զարգացնող նախագծերում կամ աշխատանքի լավացման այլ տեսակներում, որպեսզի կարողանան օգտվել իրենց անձնակազմի նորարական ներուժից
- Հետևում և վերլուծում են այլ կազմակերպությունների աշխատանքները, որպեսզի օգտվեն մյուսների փորձից իրենց աշխատանքը մշակելիս
- Զարգացման նախագիծ կազմելիս հաշվի են առնում թե իրենց և թե այլ կազմակերպություններում կիրառվող փորձը

Իրականացում

ՄԿՈՒ տրամադրողները աջակցում են բաց գործող մշակույթ, որը զարգացնում է ստեղծագործ միտքը և տեղեկությունների փոխանցումը թե իրենց կազմակերպության ներսում և թե աշխատանքային ոլորտի ներկայացուցիչների և շահառուների հետ:

ՄԿՈՒ տրամադրողները

- Հետևում են, որպեսզի ընտրված պաշտոնյաները, միավոր կառավարությունը և անձնակազմը ներդնում ունենան գործունեության շարունակական բարելավման և կառավարման հարցում հիմնվելով սպառողամետ կազմակերպության սկզբունքների վրա
- Աջակցում են նախաձեռնությունները կապված իրենց գործառնական գործընթացների զարգացման և դրա վրա հիմնված հիմնական զարգացնող գործունեության հետ
- Ստեղծում են պայմաններ և ընթացակարգեր և պաշարում են նյութեր զարգացնող ծրագրերի իրենց գործառնական ռազմավարության կիրառմանը աջակցելու համար և ապահովում անձնակազմի համար հնարավորություններ մասնակցելու զարգացման ծրագրերին և աշխատանքի բարելավմանը
- Ակտիվ և համակարգված փոխհամագործակցության մեջ են մտնում իրենց սպառողների և բաժնետիրական խմբերի հետ այնպիսի միջոցներով ինչպես հատուկ ոլորտի բնորոշ համագործակցող մարմինների հիմնում իրենց աշխատանքը բարելավելու համար

- Կուտակել բավարար միջոցներ նորարարական գործունեության համար

ՄԿՈՒ տրամադրողները օգտագործում են իրենց անձնակազմի ստեղծագործ միտքը և նորարարական տարողությունը իրենց գործունեության և ծառայությունների մեջ:

ՄԿՈՒ տրամադրողները

- Ստեղծում են ուսման ճկուն հնարավորություններ, որոնք հաշվի են առնում սպառողների կարիքները, ինչպես նաև տարբեր ՄԿՈՒ ոլորտների և տեսակների պահանջները
- Մասնակցում են ազգային և միջազգային ցանցերի և համեմատական գործունեությունների, որոնք նպատակ ունեն աջակցել մասնագիտական ուսուցմանը և գերազանցությանը
- Խրախուսում են անձնակազմին մեծապես զարգացնել և օգտագործել իրենց սեփական գիտելիքները այնպիսի միջոցներով ինչպես ուսուցիչները աշխատանքի ուսուցման ժամանակահատվածում և զարգացնող նախագծեր, որոնք նպատակ ունեն բարելավել իրենց աշխատանքային կյանքի հմտությունները
- Խրախուսում են անձնակազմին մասնակցել իրենց ոլորտի և աշխատանքի զարգացմանը

Հետազոտում. Արձագանքներ և փոփոխության ընթացակարգեր

ՄԿՈՒ տրամադրողները վերահսկում և գնահատում են իրենց բարելավումը և նորարարությունը հիմնվելով ստացված արդյունքների վրա

ՄԿՈՒ տրամադրողները

- Սովորում են իրենց քայլերից և խրախուսում անձնակազմին շարունակաբար փնտրել հնարավորություններ բարելավելու համար կազմակերպչական կատարողականությունը
- Բացահայտում և հերթականությամբ որոշում են ուղղման ենթակա հիմնական ոլորտները և իրագործում դրանք բարելավման ծրագրերում
- Բացահայտում և նախագծում են բարելավման միջոցները բիզնեսի և աշխատանքի ներկայացուցիչների, անձնակազմի և շահառուների հետ այնպես, որ բոլոր կողմերը տեղյակ լինեն աշխատանքի զարգացման ուղղությունից և ներառված գործընթացների փոփոխությունից
- Գնահատում են արձագանքները, փոխում ընթացակարգերը և հավաքում համեմատական տվյալներ իրենց գործընկերների ընթացակարգերի մասին

6. Մարդիկ՝ որպես ռեսուրս

Ուսուցիչները և մնացած անձնակազմը հիմնական դեր ունեն այն հարցում, թե ինչպես են ՄԿՈՒ տրամադրողները բավարարում հմտությունների փոփոխումը և ուսանողների և աշխատողների բարելավման կարիքները: Տրամադրողները պետք է վստահ լինեն, որ այնպիսի անձնակազմ ունեն, որոնք իրենց թվով, կառուցվածքով և իրավասության ոլորտով, աջակցում են իրենց հիմնական նպատակի իրագործմանը հնարավոր ամենալավ ճանապարհով: Անձնակազմը պետք է նաև ունակ լինի դիմակաել գալիք մարտահրավերներին: Տրամադրողները բավարարում

Էն նաև անձնակազմի պահանջները հավաքելով անհրաժեշտ իրավասությունը աշխատանքային ոլորտի ներկայացուցիչներից կամ այլ կրթություն և ուսուցում իրագործողներից:

Տրամադրողները տեղյակ են, թե իրենց ուսուցչական և այլ անձնակազմին ինչ ներկայիս և ապագա հմտություններ են անհրաժեշտ և հետևում են, որպեսզի իրենց անձնակազմը շարունակաբար ձեռք բերի, զարգացնի և օգտագործի իր իրավասությունը համաձայնեցնելով իրենց ռազմավարական խնդիրների հետ: Ի լրումն, տրամադրողները խրախուսում են անձնակազմին զարգացնել և լայնորեն օգտագործել իրենց սեփական իրավասությունը և կազմել նախագծեր գիտելիքի և իրավասության փոխանցման և անձնակազմի ներառվածության և բարեկեցության վերաբերյալ:

Նախագծում

ՄԿՈԻ տրամադրողները նախագծում և զարգացնում են իրենց մարդկային ռեսուրսները հիմնվելով այն փոփոխությունների վրա, որոնք առաջանում են աշխատանքային միջավայրում իրենց ռազմավարական զարգացման մի մաս:

ՄԿՈԻ տրամադրողները

- Գծագրում են մարդկային ռեսուրսների ռազմավարություն կամ համապատասխան նախագիծ, որտեղ պարզորոշում են դրանց նպատակները և միջոցները ուղղված իրենց ուսուցչական և այլ անձնակազմին, ովքեր նպատակ ունեն աջակցել աշխատանքի համար դրված խնդիրների լուծմանը (ինչպես անձնակազմի քանակը, հավաքագրումը, կառուցվածքը, իրավասության զարգացումը, ներգրավվածությունը և բարեկեցությունը, նաև մարդկային ռեսուրսների կառավարումը):
- Հետևում են, որպեսզի անձնակազմը ունեցել է խորհրդակցություն և որ նրանք կարող են մասնակցել մարդկային ռեսուրսների ռազմավարության նախագծմանը
- Հետևում են, որպեսզի մարդկային ռեսուրսների ռազմավարությանը վերաբերող խնդիրները լինեն շոշափելի և հասանելի

ՄԿՈԻ տրամադրողները պարբերաբար գծագրում են իրենց անձնակազմի իրավասության ներկայիս մակարդակը և ապագայում անհրաժեշտ հմտությունները և դրա վրա հիմնվելով գծում են անձնակազմի զարգացման պլանը:

ՄԿՈԻ տրամադրողները

- Որպես իրենց ռազմավարական գործընթացի մի մաս ակնկալում և գծագրում են իրենց ուսուցչական և այլ անձնակազմի անհրաժեշտ հմտությունները (հիմնական իրավասությունը)
- Գծագրում են իրենց ուսուցչական և այլ անձնակազմի ներկայիս իրավասության մակարդակը համեմատելով պահանջվող հմտությունների հետ (իրավասության քարտեզագրում):

- Գծում են զարգացման տարեկան պլան, որը ներառում է ողջ անձնակազմը, և, ըստ որի, ռազմավարական խնդիրների ուսուցչական և այլ անձնակազմի իրավասությունը պետք է բարձրացվի

ՄԿՈԻ տրամադրողները հնարավորություններ են ստեղծում ուսուցչական և այլ անձնակազմի համար զարգացնելու և ստանալու իրենց մասնագիտական իրավասությունը, մասնակցելու և հետևելու իրենց բարեկեցությանը աշխատանքում:

ՄԿՈԻ տրամադրողները

- Հետևում են, որպեսզի բոլոր անձնակազմային խմբերի համար պաշարվի բավարար ռեսուրսներ (ինչպես ժամանակը, փողը, փոխարինելու միջոցները) հասնելու համար այն նպատակներին, որոնք առկա են ռեսուրսային ռազմավարության մեջ և դրա հիման վրա կազմված պլանին
- Սահմանում են պարտականությունները, կազմակերպում աշխատանքային հանձնարարություններ և ստեղծում կազմակերպչական կառուցվածք այնպես, որ վերը նշվածը նպաստի անձնակազմային բոլոր խմբերի հմտությունների զարգացմանը, մարդկանց ներառվածությանը աշխատանքի մեջ և բարեկեցությանը
- Հետևում են, որպեսզի անձնակազմի բարեկեցության և հավասար վերաբերմունքի վերաբերյալ նախագծերը լինեն պատրաստ և պարբերաբար թարմացվեն

Իրականացում

ՄԿՈԻ տրամադրողները ապահովում են աշխատանքային պայմաններ ուսուցչական և այլ անձնակազմի համար, հետևում, որպեսզի այդ պայմանների բարելավվեն համաձայն մարդկային ռեսուրսների ռազմավարության կամ համապատասխան պլանի:

ՄԿՈԻ տրամադրողները

- Հետևում են, որպեսզի անձնակազմը տեղյակ լինի մարդկային ռեսուրսների ռազմավարության մեջ սահմանված խնդիրներից և նախագծերից և որ մարդիկ պարտավորվում են աջակցել դրանց իրականացմանը բոլոր միավորներում և մակարդակներում
- Հետևում են, որպեսզի կատարողականության և զարգացման վերլուծությունը պարբերաբար իրականացվի բոլոր միավորումներում և անձնակազմի բոլոր խմբերում
- Խրախուսում են անձնակազմին զարգացնել, կիսվել և օգտագործել իրենց իրավասությունը
- Աջակցում է անձնակազմի աշխատանքի մեջ ներառված լինելուն և բարեկեցությանը, օգտագործելով տարբեր միջոցներ և խթաններ համաձայնեցված անձնակազմի հետ

ՄԿՈԻ տրամադրողները առաջարկում են անձնակազմին բազմազան հնարավորություններ ձեռք բերելու և զարգացնելու համար իրենց իրավասությունը:

ՄԿՈԻ տրամադրողները

- Հետևում են, որպեսզի ուսուցիչներին տրամադրվի հնարավորություն պարբերաբար մասնակցելու շարունակական ուսուցումների
- Աշխատանքի ուսուցման ժամանակահատվածներում ստեղծում են ուսուցիչների համար պայմաններ և աջակցում աշխատանքային աշխարհի հետ շփումների զարգացմանը և աշխատանքի ռոտացիային
- Առաջարկում են ուսուցչական անձնակազմին զարգացնել իրենց իրավասությունը մասնակցելով նախագծերում և նման այլ ձեռնարկումներում
- Խրախուսում և աջակցում են միջազգային համագործակցությունների, անձնակազմի փոխանակության և մասնագիտական հմտությունների զարգացման միավորումների մեջ ներգրավվածությունը

Հետազոտում, արձագանքներ և փոփոխության ընթացակարգեր

ՄԿՈԻ տրամադրողները գնահատում են մարդկային ռեսուրսների ռազմավարության մեջ դրված խնդիրները լուծումը և անձնակազմին վերաբերող այլ պլանների իրագործումը՝ հիմնվելով մոնիթորինգի և արձագանքների տվյալների, կատարողականության այլ տվյալների և լավ փորձերի վրա, օգտագործելով այս ամենը իրենց աշխատանքը բարելավելու համար:

ՄԿՈԻ տրամադրողները

- Պարբերաբար հավաքում են մոնիտորինգի և արձագանքների տվյալները, որոնք վերաբերում են իրենց ուսուցչական և այլ անձնակազմի կարգավիճակը բոլոր միավորումներում և մակարդակներում
- Կազմում են մարդկային ռեսուրսների բալանսների տարեկան թղթեր անձնակազմին վերաբերող մոնիտորինգի և արձագանքների տվյալների մասին
- Օգտագործում են մոնիտորինգի և արձագանքների տվյալները ուսուցչական և այլ անձնակազմի վերաբերյալ և հիմնվելով դրանց վրա վերանայում մարդկային ռեսուրսների ռազմավարությունը
- Ուղղում են անձնակազմի զարգացմանը, ներառվածությանը և աշխատանքային բարեկեցությանը վերաբերող ընթացակարգերը և դրանց իրականացումը հիմնվելով մոնիտորինգի և արձագանքների տվյալների և լավ փորձի վրա

7. Արդյունավետ գործընթացներ

Կրթության և ուսուցման գերազանց կազմակերպությունը բնութագրվում է նրանով, որ այն կազմակերպում է իր աշխատանքը գործընթացներով (գործընթացների շղթա): Տիպային գործընթաց է կրթական և ուսուցողական գործընթացը, որը կարող է ժամանակագրական առումով միմյանց հետ կապված փուլեր ներառել՝ ուսանողների հավաքագրում, կրթության և ուսուցման նախագծում, դրանց իրականացում, գնահատում: Աշխատանքի դիտարկումը՝ որպես գործընթացներ, օգնում է ՄԿՈԻ իրագործողներին կենտրոնացնել իրենց ուշադրությունը այնպիսի հարցերի վրա, որոնք էական են սպառողների առումով, մեկ ուղով տանել իրենց աշխատանքը, պարզել պարտականությունները և ուղղել ռեսուրսները նրան ինչը համապատասխանում է նպատակների իրականացմանը: Բացի այդ, գործընթացի վրա հիմնված

ընթացակարգը օգնում է իրագործողներին դիտարկել իրենց աշխատանքը որպես մեկ ամբողջություն և վերլուծել միմյանց մոտ ֆունկցիաների կապերը (ինչպես աշխատանքի վրա հիմնված ուսուցման տեսական կրթությունը և վերահսկողությունը, ուսուցման և խորհրդատվության ուղղորդումը, ուսանողական սոցիալական ապահովության ծառայությունները):

ՄԿՈԻ տրամադրողների աշխատանքը կարելի է բաժանել երեք տարբեր գործընթացների, ըստ այն ավելացված արժեքի, որ նրանք ստեղծում են սպառողի համար: Հիմնական գործընթացների առումով տրամադրողները առաջարկում են այնպիսի ծառայությունները, որ արտաքին սպառողները և շահառուները հիմնականում սպասում են (օրինակ՝ մասնագիտական հմտություններ և ուսանողների համապատասխանելիություն հետագա ուսուցման համար կամ հմուտ աշխատողներ կազմակերպությունների համար): Աջակցող գործընթացները տրամադրողները օգտագործում են, որպեսզի ստեղծեն պայմաններ իրենց հիմնական գործընթացների իրագործման համար: Այս գործառույթները ներառում են ուղղորդող խորհրդատվություն, ուսանողական բարեկեցության ծառայություններ, տեղավորում, գրասենյակային ծառայություններ, ինչպես նաև կառավարում և մարդկային ռեսուրսների զարգացում: Համապատասխանաբար, տրամադրողները ունեն մատակարարող և համագործակցող գործընթացներ (ինչպես շահառուների հետ համագործակցությունը) նախագծելու, կառավարելու և զարգացնելու համար արտաքին փոխհամագործակցությունը (օրինակ, արտադրանքների և ծառայությունների ձեռք բերում և համագործակցություն աշխատատեղերի և այլ կրթական և ուսուցողական կառույցների և այլ գործընկերների հետ):

Գործընթացները կառավարման կարևոր միջոցներ են, որոնք հնարավորություն են տալիս ՄԿՈԻ իրագործողներին փորձնական դաշտ տեղավորել իրենց ռազմավարական խնդիրները և իրագործել դրանց հիմնական առաքելությունը: Գործընթացի կառավարումը պահանջում է, որպեսզի նպատակները, պարտականությունները և գործընթացին վերաբերող կառավարող ու մոնիտորինգով զբաղվող մեխանիզմները հստակ են և որ գործընթացները շարունակաբար զարգանում են:

Շատ կարևոր է, որ որոշում կայացնելու , գործընթացների կառավարման և այլ օպերացիաների ժամանակ ՄԿՈԻ տրամադրողները ունենան վստահելի տեղեկատվություն թե՛ ներկային և թե՛ սպասվելիք կատարողականության վերաբերյալ:

Նախագծում

ՄԿՈԻ տրամադրողները սահմանում են իրենց հիմնական գործընթացները հիմնվելով իրենց գլխավոր առաքելության, կոնկրետացված ռազմավարական նպատակների և սկզբունքների վրա:

ՄԿՈԻ տրամադրողները

- Պարզում են իրենց արտաքին և ներքին սպառողներին (օրինակ ուսանողների տարբեր խմբեր, ներառյալ երիտասարդներ, մեծահասակներ, հատուկ կարիքավոր ուսանողներ, աշխատակիցներ և աշխատանքային ադմինիստրացիա) և այդ սպառողների համար

տրամադրվող կրթությունը, ուսուցումը, զարգացումը և այլ ծառայություններ հիմնվելով իրենց գլխավոր առաքելության վրա

- Սահմանում են հիմնական գործընթացները և նրանց միջև եղած կապը հիմնվելով սպառողների վերլուծության վրա
- Սահմանում են էական գործընթացները, որոնք կարող են ներառել կրթության, ուսուցման և այլ ծառայությունների պլանավորում, դրանց տրամադրում և առևտրային ծառայությունների և ապրանքների մատակարարում
- Սահմանում են աջակցող գործընթացները, որոնք կարող են ներառել ուսուցմանն աջակցող գործառույթներ, ինստիտուցիոնալ ադմինիստրացիա, անձնակազմ և կառավարում
- Հստակեցնում են մատակարարող և համագործակցող գործընթացները, որոնք կարող են ներառել համագործակցություն նյութերի և սարքավորումների մատակարարողների, ինչպես նաև աշխատանքային ոլորտի ներկայացուցիչների և տարբեր շահառուների հետ

ՄԿՈԻ տրամադրողները կազմում են իրենց գործընթացները ենթագործընթացների միջոցով, ինչպես և պահանջվում է:

ՄԿՈԻ տրամադրողները

- Պարզում և սահմանում են այն ենթագործընթացները, որոնք առկա են հիմնական գործընթացներում՝ կրթության, ուսուցման և այլ ծառայությունների պլանավորում, մյուս բաների հետ մեկտեղ ներառում են անհրաժեշտ հմտությունների ակնկալում, կրթական և ուսուցողական ծառայությունների նախագծում, գրաֆիկի պատրաստում, ուսուցման կազմակերպման նախագծում, աշխատանքի վրա հիմնված ուսուցման կազմակերպում և անհատական ուսուցման և անհատական կրթության նախագծերի կազմում
- Պարզում և սահմանում են ենթագործընթացներ, որոնք ներառված են աջակցող գործընթացների մեջ (ինչպես օրինակ ուղղորդող խորհրդատվություն, տեղավորման և գրասենյակային ծառայություններ):
- Պարզում և սահմանում են այն ենթագործընթացները, որոնք ներառված են մատակարարողի և համագործակցողի գործընթացներում և դիտարկում են դրանք որպես մեկ գործառույթային ամբողջություն հիմնական առաքելությունը կատարելու համար, ինչպես օրինակ համագործակցության գործընթացները մատակարարողների, աշխատանքային ոլորտի ներկայացուցիչների, այլ կրթական և ուսուցողական կառույցների և տարբեր շահառուների հետ

ՄԿՈԻ տրամադրողները ապահովում են բավարար ռեսուրսներ գործընթացի նպատակների իրագործման համար:

ՄԿՈԻ տրամադրողները

- Հետևում են, որպեսզի հիմնական աջակցող, մատակարարող և գործընկեր գործընթացները կազմեն կոնսիսիում ծրագրի իրականացնողների և միավորների մակարդակներով, օրինակ՝ մանկավարժական գործունեությունների առումով, ծրագրի իրականացնողներ մակարդակով պատրաստված դասացուցակի ընդհանուր բաժնի, վերահսկում է անհատական և կրթական, ուսուցողական նախագծերի իրենց գրաֆիկային զարգացման պատրաստության, ուսուցման և մանկավարժական այլ գործունեությունների
- Հետևում են, որպեսզի այն գործընթացները, որոնք համապատասխանում են աշխատանքային ոլորտի ներկայացուցիչների կամ այլ շահառուների հետ համագործակցությանը ուղղված են գործունեությունների աջակցմանը
- Ստեղծում են պայմաններ համապատասխան գործընթացների համար բավարար նյութերի և մարդկային ռեսուրսների միջոցով

Իրականացում

ՄԿՈԻ տրամադրողները տեղափոխում են իրենց ռազմավարական խնդիրները, նպատակները և սկզբունքները փորձնական դաշտ գործընթացների միջոցով: ՄԿՈԻ տրամադրողները նաև օգտագործում են գործընթացները կառավարելու և վերահսկելու համար իրենց աշխատանքը:

ՄԿՈԻ տրամադրողները

- Կառավարում և վերահսկում են տարբեր գործընթացներ հստակեցված նպատակների, դրանց հետ կապված ցուցիչների և մոնիտորինգի այլ միջոցներով
- Խնդիրներ և ցուցիչներ են հիմնում, որոնք բխում են տարբեր գործընթացների համար ռազմավարությունից և բացատրում են դրանք իրենց անձնակազմին
- Նշանակում են մարդկանց կամ կողմեր (գործընթացի տերեր), որոնք պատասխանատու կլինեն տարբեր գործընթացների և դրանց շարունակական զարգացման համար
- Հետևում են, որպեսզի անձնակազմը տեղյակ լինի իրենց դերերից և պարտականություններից կիրառման և զարգացման գործընթացների մեջ
- Օգտագործում են գործընթացներ հետևելու համար, որ գրաֆիկը թարմացված է, որ իրավասության թեստեր անցկացնելու համաձայնությունները վավեր են և որ կրթությունը և ուսուցումը անցկացվում են որակի բարձր չափանիշով
- Հաշվի են առնում աշխատանքային ոլորտի ներկայացուցիչների և անհատ ուսանողների կարիքները ՄԿՈԻ պաշարը կազմելիս և կիրառելիս
- Ջարգացնում են հստակ և արդյունավետ ընթացակարգեր, որպեսզի ճանաչեն ուսանողների նախապես ձեռք բերված հմտությունները և անհատականացնեն ուսուցումը
- Հետևում են, որպեսզի աշխատանքային ոլորտի ներկայացուցիչների և այլ շահառուների հետ համագործակցությունը համապատասխանի երկակի համաձայնեցված սկզբունքներին տարբեր միավորներում և մակարդակներում

Հետազոտում. Արձագանքներ և փոփոխության ընթացակարգեր

ՄԿՈԻ տրամադրողները պարբերաբար գնահատում և ստուգում են իրենց աշխատանքները հիմնվելով մոնիտորինգի և արձագանքների տվյալների վրա, լավ փորձի և փոփոխությունների, որոնք առաջանում են իրենց գործունեության միջավայրում:

ՄԿՈԻ տրամադրողները

- Օգտագործում են տարբեր գործառույթների մոնիտորինգի, արձագանքների և գնահատման տվյալները իրենց աշխատանքը զարգացնելիս
- Տեղեկատվություն են ձեռք բերում գործունեությունների և դրանց կատարողականության վերաբերյալ ինքնագնահատման և աշխատանքի ներքին և արտաքին աուդիտի միջոցով
- Ձեռք են բերում թարմ, վստահելի և ըմբռնելի տեղեկատվություն իրենց ներքին և արտաքին աշխատանքային միջավայրի կարգավիճակի մասին, որպեսզի աջակցեն աշխատանքի զարգացմանը
- Օգտագործում են իրենց և այլ կազմակերպությունների լավ փորձը իրենց մանկավարժական կամ այլ գործունեությունները բարելավելու համար
- Ջարգացնում են ամբողջապես կազմված հիմնական, աջակցման և մատակարարողի և գործընկերոջ գործունեությունը այնպես, որ դրանք դիմակայեն աշխատանքային միջավայրի անընդհատ փոփոխվող մարտահրավերները

8. Համատեղելիությունը աշխատանքային ոլորտի և համագործակցության հետ

Աշխատանքային ոլորտի և համագործակցության հետ համատեղելի լինելը բարձրորակ մասնագիտական կրթության և ուսուցման նախադրյալներն են: ՄԿՈԻ իրականացնողները աշխատում են իրենց գործընկերների հետ միասին ընդհանուր նպատակների հասնելու համար: Նրանք աջակցում են միմյանց իրենց մասնագիտական հմտություններով, ռեսուրսներով և ունակություններով, ձգտելով ավելի արդյունավետորեն բավարարել սպառողների և տարբեր շահագրգիռ անձանց կարիքները:

ՄԿՈԻ իրականացնողները ունեն բազմազան գործընկերների կարիք իրենց կրթության և ուսուցանելու մակարդակի համար, որպեսզի կարողանան բավարարել ուսանողների և աշխատանքային ոլորտի փոփոխվող պահանջները: ՄԿՈԻ իրականացնողները ունեն նաև աճող դերակատարություն գործնական աշխարհի զարգացման մեջ: Սա խոսում է ուժեղ և ամուր տարածքային կառույցների միավորման մասին, կապված կրթության, ուսուցման և աշխատանքային ոլորտի հետ:

Աշխատավայրերից, ձեռնարկություններից և այլ գործընկերներից բացի (ինչպիսիք են աշխատանքի կառավարումը, Զբաղվածության և Տնտեսական Զարգացման տարածքային կենտրոնները և տեղական սոցիալական կառավարման մարմինները) ՄԿՈԻ իրականացնողը կարող է համագործակցել այլ կրթական և ուսուցում իրականացնող մարմինների հետ: Հաշվի առնելով ՄԿՈԻ-ի և աշխատանքային ոլորտի միջազգայնացման հեռանկարները, շատ կարևոր է նաև օտարերկրյա կրթական և ուսուցման հաստատությունների և աշխատաշուկաների հետ

կապեր հաստատելը: Այն կխթանի ուսանողներին և ուսուցիչներին ավելի ճկուն լինելուն, ինչպես նաև ՄԿՈՒ իրականացնողների գործառույթների բարելավմանը:

Պլանավորում

ՄԿՈՒ իրականացնողները համագործակցություն են հաստատել գործնական աշխարհի, աշխատանքային ոլորտի այլ հատվածների և այլ գործընկերների հետ և սահմանել են իրենց նպատակները, որպես իրենց ռազմավարության կամ այլ ռազմավարական պլանների մի մաս:

ՄԿՈՒ տրամադրողները

- որոշում են համագործակցությանը և աշխատանքային ռազմավարությանը առնչվող խնդիրներ և սահմանում են համագործակցությունների ղեկավարմանը ու զարգացմանը ուղղված սկզբունքներ և ընթացակարգեր:
- որոշում և դասակարգում են նրանց կարևոր գործընկերներին, որոնք աջակցում են իրականացնել ռազմավարական նպատակները
- ակտիվորեն փնտրում են նոր գործընկերներ, որոնք կօգնեն հակազդել աշխատանքային միջավայրի բարդություններին
- աշխատանքային և ֆինանսական պլանավորման ժամանակ որպես հիմք են օգտագործում են ռազմավարական նպատակները, համագործակցության զարգացման և արդյունավետության հետ կապված խնդիրները որոշելիս

Իրականացում

ՄԿՈՒ տրամադրողները մշակում և կազմակերպում են աշխատանքի վրա հիմնված ուսուցում, ուսուցանման միջավայրեր և այլ միջոցներ, աշխատանքային ոլորտում իրենց հմտությունները և ունակությունները ցուցադրելու համար:

ՄԿՈՒ տրամադրողները

- մշակում են մանկավարժական մեթոդներ և մոտեցումներ, որը հնարավորություն է տալիս զարգացնել աշխատանքի վրա հիմնված ուսուցումը և աշխատավայրերը որպես ուսուցանման միջավայրեր
- պահպանելով միասին համաձայնեցված սկզբունքները ձեռնարկությունների և այլ աշխատավայրերի հետ, կազմակերպում են մասնագիտական հմտությունները և ունակությունները ցուցադրող թեստեր
- համոզվում են, որ աշխատավայրերում ուղեցույց տվողները ունեն համապատասխան ընդունակություններ և հնարավորություններ սովորողներին օգնելու համար
- աջակցում են աշխատավայրերում ուղեցույց տվողներին, որպեսզի բարելավեն աշխատավայրում ուսուցման որակը և նրանց կազմակերպում են ուսուցման դասընթացներ
- Մեծապես օգտվում են իրավասության թեստեր գնահատողներից և այն մարմիններից, որոնք ներգրավված են մասնագիտական հմտությունների ցուցադրման մեջ, որպեսզի

զարգացնեն կրթության և ուսուցման ծառայությունները, որոնք համապատասխանեցված են աշխատանքային ոլորտի ներկայացուցիչների հետ:

- Աջակցում են անձնակազմին միավորել և թարմացնել իրենց աշխատանքային կյանքի հմտությունները և կապերի շարունակական զարգացումը աշխատանքային ոլորտի ներկայացուցիչների հետ
- Համագործակցում են տրամադրելով աշակերտական ուսուցում

ՄԿՈԻ տրամադրողները սկտիվորեն համագործակցում են այլ կրթական և ուսուցողական կառույցների հետ, որոնք ներառված են միննույն ոլորտում և տարածքում:

ՄԿՈԻ տրամադրողները

- Համագործակցություն են հիմնում այն նպատակով, որպեսզի աջակցեն ուսանողների տեղափոխությանը կրթության մի մակարդակից մյուսը և իրավասության համախմբումը և մասնագիտացումը
- Ակտիվորեն ներգրավվում են համագործակցության մեջ իրենց տարածքի համապարփակ դպրոցների հետ, այսպիսով՝ աջակցելով աշակերտների անցումը դեպի մասնագիտական ուսուցում և համապարփակ դպրոցի ուսուցիչների գիտելիքը աշխատանքային շուկայի ոլորտում
- Համագործակցում են ընդհանուր միջնակարգից բարձր դպրոցների և ուսուցողական կառույցների հետ, որպեսզի շատացնեն ուսուցման հնարավորությունները ելնելով ուսանողների անհատական կարիքներից
- Ակտիվորեն ներգրավվում են համագործակցության մեջ այնպիսի կրթություն և ուսուցում առաջարկողների հետ, որոնք նաև իրենց ուսանողների հետագա կրթության պոտենցիալ տրամադրողներն են
- Այլ ՄԿՈԻ ծրագրերի իրականացնողների հետ համաձայնության են գալիս ոլորտին բնորոշ մասնագիտացման վերաբերյալ, այնպես, որ նրանց ծառայությունները բավարարեն մասնագիտական իրավասության պահանջները, որոնք մասնագիտացված են մի կոնկրետ ոլորտի որպես մեկ ամբողջության մեջ:

ՄԿՈԻ ծրագիր իրականացնողները համագործակցում են գործընկերների հետ, որոնք աշխատում են այլ բաժիններում, որպեսզի ծառայություններ մատուցեն ուսանողներին և աշխատանքային ոլորտի ներկայացուցիչներին:

ՄԿՈԻ տրամադրողները

- Համագործակցում են, որպեսզի առաջարկեն աջակցման ծառայություններ հատուկ կարիքավոր ուսանողներին, կիրառեն կրթությունը և ուղղորդումը
- Համագործակցում են կուսակցությունների հետ ինչպես աշխատանքային ադմինիստրացիան և ռեգիոնալ աշխատանքի ընդունման և տնտեսական զարգացման կենտրոններ տալով ուսուցողական ծառայություններ գործազուրկ աշխատանք փնտրողների համար և գործազրկության ռիսկի տակ գտնվող մարդկանց համար

- Համագործակցում են տալով ուսուցողական և աջակցող ծառայություններ, որոնք պահանջվում են կազմակերպությունների կողմից
- Համագործակցում են տարբեր հեղինակությունների և այլ կողմերի հետ այնպիսի ոլորտներում ինչպիսիք են կրթության և ուսուցման կարիքների ակնկալում, սոցիալական բացառման կանխարգելում և ուսման հասանելի հնարավորություններ, ուսանողների բարեկեցություն և միասնության զգացողություն

ՄԿՈԻ տրամադրողները մասնակցում են բիզնեսի և աշխատանքի տեղային աշխարհի զարգացմանը այդ տարածքում գործող այլ ուսուցողական ծրագրերի պատասխանատուների և կողմերի հետ:

ՄԿՈԻ տրամադրողները

- Համագործակցում են ակնկալելով կրթություն, ուսուցում և անհրաժեշտ հմտություններ
- Աջակցում են աշխատավայրի խորհրդականի աշխատանքին, որպեսզի բարելավեն աշխատավայրում ուսուցման որակը
- Խրախուսում են նորարական գործունեությունները աշխատավայրերում, գործունեությունների և աշխատող համայնքների զարգացումը ՓՄՁ-ների ներսում հատկապես աշխատանքի աշխարհին աջակցելու և զարգացնելու իրենց պարտականության միջոցով

Հետազոտում. Արձագանքներ և փոփոխության ընթացակարգեր

ՄԿՈԻ տրամադրողները ունեն գնահատման և արձագանքների համակարգ, որը ներառում է համագործակցության գնահատման և կատարողականության զարգացման ծրագրեր և կրթության և ուսուցման համաձայնեցումը աշխատանքային ոլորտի ներկայացուցիչների հետ:

ՄԿՈԻ տրամադրողները

- Հետևում են, որպեսզի հիմնական շահառուները (ինչպես աշխատանքի և բիզնեսի աշխարհը, ուսանողները, աշխատանքային ադմինիստրացիան) մասնակցեն գնահատման պլանավորմանն ու կիրառմանը
- Շարունակաբար զարգացնում են համագործակցություններ և վերլուծում միմյանց հետ կապ ունեցող ռազմավարական խնդիրները, որոնք հիմնված են կատարողականության և արձագանքների տվյալների և աշխատանքային միջավայրում ի հայտ եկող փոփոխությունների վրա
- Ջարգացնում են պատրաստություններ և աջակցում տեսակներին, որոնք կապ ունեն աշխատանքի վրա հիմնված ուսուցման, մասնագիտական հմտությունների ցուցադրման և իրավասության թեստերի հետ, համագործակցելով բիզնեսի և աշխատանքային ոլորտի

ներկայացուցիչներների հետ հիմնվելով գնահատման արդյունքների և արձագանքների վրա

9. Սոցիալական պատասխանատվություն

Բացի բավարարելուց անհատների և աշխատանքային ոլորտի ներկայացուցիչների պահանջվելիք հմտությունները, հաշվի առնելով անհատական կրթության և ուսուցման կարիքները և զարգացնելով աշխատանքային աշխարհը, մասնագիտական կրթության և ուսուցման հիմնական առաքելությունը ներառում է նաև կրթության և ուսուցման համար հավասար հնարավորություններ, սոցիալական բացառման կանխարգելում, ակտիվ քաղաքացիության աջակցում և կրթություն և ուսուցում տալ հատուկ կարիքավոր ուսանողներին: Մասնագիտական կրթության և ուսուցման համար տիպական է ունենալ սոցիալական պատասխանատվություն իր հիմնական առաքելությունից բացի, ինչը ակնհայտ է ՄԿՈՒ անցկացնողների ողջ աշխատանքում: Ապագայի կառուցումը այնպիսի լուծումներով, որոնք պատահականորեն դիմադրողական են տնտեսական, էկոլոգիական, սոցիալական և մշակութային առումներով պահանջում է ներմուծված ընդհանրությունների ընկալում և հասկացում: Ստեղծելով մթնոլորտ, որը աջակցում է մասնակցությանը, միասնականության զգացմունքին և ազդեցություն ունի ՄԿՈՒ անցկացնողների կազմակերպության մոտ և դրա անհատական միավորները ամրացնում են դրա կարողությունը կրել սոցիալական պատասխանատվություն և զարկ տալ կայուն զարգացմանը:

Նախագծում

ՄԿՈՒ տրամադրողները սահմանում են սոցիալական պատասխանատվության առավելությունները ռազմավարական և աշխատանքային պլաններում; Անձնակազմը ներառված է առավելությունները սահմանելու գործում:

ՄԿՈՒ տրամադրողները

- Հաշվի են առնում սոցիալական պատասխանատվությունը իրենց արժեքներում և ռազմավարություններում
- Կազմում են պլան կամ ծրագիր, որպեսզի զարկ տան կայուն զարգացմանը որպես իրենց գործող համակարգի մաս, ներառելով այնպիսի ասպեկտներ ինչպես միջավայրի պարտականություն, միասնականության ոգի, հանդուրժողականություն, հավասարություն և սոցիալական բացառման կանխարգելում

Իրականացում

ՄԿՈՒ տրամադրողները հետևում են, որպեսզի կայուն զարգացման սկզբունքները հաշվի առնվեն իրենց գործունեության մեջ:

ՄԿՈՒ տրամադրողները

- Գործում են էթնիկորեն կայուն կերպով ապահովելով այնպիսի բնագավառներ ինչպիսիք են գործունեությունների թափանցիկությունը և շփումների հրապարակայնությունը

- Ակտիվորեն փնտրում են հնարավորություններ մասնակցելու այնպիսի նախագծերում, որոնք օգնում են հասնել կայուն զարգացման նպատակներին
- Աջակցում են սոցիալապես կայուն զարգացմանը ներդնելով անձնակազմի և ուսանողների բարեկեցությանը և հավասարությանը, ամրացնելով միասնականության ոգին և կանխարգելելով բացառումը և խտրականությունը, ինչպես նաև մտավոր և ֆիզիկական բռնությունը
- Հետևում են էկոլոգիապես կայուն զարգացման իրականացմանը իրենց կազմակերպության բոլոր գործունեությունների միջոցով

ՄԿՈԻ տրամադրողները պատասխանատվությամբ են մոտենում օրենքներին:

ՄԿՈԻ տրամադրողները

- Հետևում են, որ անձնակազմի բոլոր անդամները և ուսանողները տեղյակ լինեն հիմնական օրենքներից և նորմերից, որոնք ղեկավարում են իրենց ոլորտը և դրանց հետ կապված ցանկացած փոփոխություններից, նաև վստահանում են, որ անձնակազմը համապատասխանում է դրանց
- Աջակցում են աշխատանքի և ուսուցման միջավայրի առողջությանը և ապահովությանը իրենց սեփական տարածքներում, աշխատանքի վրա հիմնված ուսուցման ժամանակահատվածներում, աշխատավայրերում

ՄԿՈԻ տրամադրողները ակտիվ դեր են խաղում կրթության և ուսուցման ազգային և տարածաշրջանային զարգացման հարցում:

ՄԿՈԻ տրամադրողները

- Առաջարկում են անձնակազմին և միավորումներին մասնակցել այնպիսի գործունեություններում ինչպիսիք են Ազգային հիմնական գրաֆիկ կամ Իրավասության վրա հիմնված որակավորումների պահանջներ ՄԿՈԻ զարգացման նախագծերում
- Առաջարկում են անձնակազմին և ուսանողներին պատրաստվել և մասնակցել մասնագիտական հմտությունների մրցումներին և ակտիվ դեր խաղալ մրցակցային գործունեությունների տարածման հարցում
- Համագործակցում են աշխատանքային ադմինիստրացիայի հետ ծառայությունների զարգացման հարցում, որպեսզի խթանեն զբաղվածության հնարավորությունները

Հետազոտում. Արձագանքներ և փոփոխության ընթացակարգեր

ՄԿՈԻ անցկացնողների գնահատման և արձագանքների համակարգը ներառում է նրանց սոցիալական պատասխանատվության իրազորման գնահատումը: ՄԿՈԻ տրամադրողները

հաշվի են առնում սոցիալական պատասխանատվությունները իրենց զարգացման բոլոր գործունեություններում:

ԲԱՌԱՐԱՆ

Այս հավելվածը ներառում է այս փաստաթղթում օգտագործված որակի կառավարման հիմնական հասկացությունները: Որոշ սահմանումներ հիմնված են -EN ISO 9000:2005 ստանդարտում (Որակի կառավարման համակարգեր: Հիմունքներ և բառապաշար) նշված տերմինների վրա, որը տպագրվել է Ֆիննական ստանդարտների SFS ասոցիացիայի կողմից: Այն սահմանումները, որոնք հիմնված են ISO ստանդարտի վրա նշված են աստղանիշով (*):

Բաժնետիրություն

Նշանակում է սովորել լավագույն փորձից, կազմակերպության կամ միավորման գործունեության փորձից համակարգված համեմատությունից այլ միավորումների կամ կազմակերպությունների հետ: Բաժնետիրությունը կարող է օգտագործվել համեմատելու համար այնպիսի ոլորտներ ինչպիսիք են ռազմավարությունները, ընթացակարգերը, գործընթացները և ցուցիչները:

Գերազանցության բնութագրիչներ

Կազմակերպչական այն հատկությունները, որոնք կարող են հիմնականում համարվել գերազանց կատարողականության անհրաժեշտ նախադրյալներ: Այս բնութագրիչները ներառված են օրինակ, ԳՀՀ (Գերազանցության հիմնական հասկացություններ) միջոցում:

Կոպենհագենյան գործընթաց

Միջոց է բարելավելու մասնագիտական կրթության և ուսուցման որակը Եվրոպական միության երկրներում: Այն ունի հետևյալ հիմնական նպատակները՝ բարելավել մասնագիտական կրթության և ուսուցման որակը, բարձրացնել դրա գրավչությունը և մոբիլություն խրախուսել մասնագիտական կրթության և ուսուցման ուսանողների և որակավորում կրողների մոտ:

Սպառողակենտրոն մոտեցում

Նշանակում է տեղյակ լինել և ակնկալել սպառողների կարիքները և շարունակաբար բարելավել գործողությունները, որոնք հիմնված են նրանց կարիքների, սպասումների, արձագանքների և բարելավման առաջարկների վրա: Բացի արտաքին սպառողներից, կազմակերպությունները ուշադրություն են դարձնում նաև իրենց ներքին սպառողներին, իրենց գործատուները զարգացնելիս:

Սպառող

Կազմակերպություն է կամ անհատ, որը ստանում է արտադրանք*: Մասնագիտական կրթության և ուսուցման մեջ սպառողները ավելի շուտ համարվում են ակտիվ մասնակիցներ, քան պարզապես ծառայություններ ստացողներ: Մասնագիտական կրթության և ուսուցման հիմնական սպառողներից են կրթական և ուսուցողական ծառայությունից օգտվողները (ուսանողներ և աշխատող կենդանի կազմակերպություններ) և մարմիններ, որոնք գնում և վճարում են կրթության և ուսուցման համար:

Կրթություն և ուսուցում տրամադրողներ

Կարող են հանդիսանալ տեղական իշխանություն (քաղաքապետարան), համատեղ քաղաքային իշխանություն, գրանցված կազմակերպություն կամ հիմնադրամ լիազորված Կրթության նախարարության կողմից մասնագիտական կրթություն և ուսուցում տրամադրելու համար: Մասնագիտական կրթությունը և ուսուցումը կարող են նաև կազմակերպվել պետական սեփականություն հանդիսացող հիմնարկի կողմից:

Գնահատում

Վերլուծության տակ գտնվող նպատակի կամ գործողության բացատրական վերլուծությունն է:

Արտաքին աուդիտ

Վերաբերում է համակարգված և անկախ վերլուծությանը, անցկացված կազմակերպությունից դուրս կողմերի կողմից հիմնելու համար, թե արդյոք կազմակերպչական գործունեությունները համապատասխան են սկզբունքներին և իրենց նպատակին:

Արտաքին գնահատում

Վերաբերում է կազմակերպչության կարգավիճակի և գործողությունների բացատրական վերլուծությանը, որն անցկացվում է կազմակերպությունից դուրս կողմերի կողմից: Գնահատումը կարող է կենտրոնանալ կոնկրետ գործող ոլորտների կամ գործընթացների վրա կամ իրենց ողջ կազմակերպության վրա:

Մարդկային ռեսուրսների հաշվեկշիռ

Նշանակում է տարեկան զեկույց կազմված մարդկային ռեսուրսների վերաբերյալ մոնիտորինգի տվյալներից, որը տալիս է կազմակերպության մարդկային ռեսուրսների զարգացման և կարգավիճակի ամփոփում և որը օգտագործվում է մարդկային ռեսուրսների զարգացման համար:

ISO 9000 ստանդարտների համակարգ

Բաղկացած է ստանդարտների շարքից, որոնք սահմանում են որակի կառավարման համակարգի պահանջներ օգնելու համար կազմակերպություններին տալ այնպիսի որակ, որը պահանջում են նրանց սպառողները:

Ուսուցողական կազմակերպություն

Մի կազմակերպություն է, որը շարունակաբար զարգացնում և հարմարեցնում է իր ընթացակարգերը: ՌԻ-սուցողական կազմակերպությունը բնութագրվում է այնպիսի կողմերով, ինչպես շարունակական ուսուցում, ընդգրկուն գործող մշակույթ, գործունեության շարունակական գնահատում և անձնակազմի և ղեկավարության նվիրվածություն աշխատանքային նպատակներին:

Լիսաբոնյան ռազմավարություն

Վերաբերում է փոփոխության ռազմավարությանը, որը սահմանվել է Եվրամիության համար Լիսաբոնի Եվրոպական խորհրդի կողմից 2000 թվականի մարտին, և որը հետագայում անվանվեց գազաթնաժողովի անցկացման վայրի անունով: Ռազմավարությունը մի ընդունված տեսլական է այն ուղղության մասին, որով Եվրոպական միության երկրները ցանկանում են զարգացնել իրենց տնտեսություններն ու հասարակությունները հաջորդ տասը տարիների ընթացքում: Լիսաբոնյան ռազմավարության էությունն է ամրապնդել մրցունակությունը, հետապնդել լրիվ զբաղվածություն և աջակցել սոցիալական համախմբվածություն:

Մասստրիխտ կոմյունիկե

Ընդունվել է պաշտոնական նախարարական ժողովի ժամանակ, որն անցկացվել է Մասստրիխտում 2004 թվականի դեկտեմբերին: Կոմյունիկեն ուսումնասիրում է առաջընթացը, որպես Կոպենհագենյան գործընթացի մի մաս և դրա նպատակների իրականացումը: Այն նպատակ ունի խթանել եվրոպական աշխատանքային շուկայի նվաճմանը և կազմել եվրոպական որակավորման բաց և ճկուն նախագիծ որակավորումների և իրավասությունների թափանցիկության համար:

Առաքելություն

Բացատրում է, թե ինչն է կազմակերպության գոյության նպատակը:

Աշխատանքային միջավայր

Վերաբերում է այն ամենին, ինչը կարող է ազդել կազմակերպության աշխատանքի վրա: Աշխատանքային միջավայրի վերլուծությունը ներառում է կազմակերպության թե՛ արտաքին և թե՛ ներքին աշխատանքային միջավայրերը: Մասնագիտական հաստատության աշխատանքային միջավայրը ներառում է այնպիսի ոլորտներ ինչպես կրթությունը, ուսուցումը, հասարակական սկզբունքները, աշխատանքային աշխարհը և դրա զարգացումը, ինչպես նաև ներքին գործոններ:

Աշխատանքային պլան

Փաստաթուղթ է կազմված կազմակերպչական ռազմավարության իրագործման և դրա որակի բարձրացման նպատակով: Այն ներառում է կատարողականության հստակեցված նպատակներ, ընթացակարգեր, նրանց ժամկետները և ռեսուրսները:

Աշխատանքային միավոր

Կրթության և ուսուցման տրամադրողի միավոր է, որը պատասխանատու է կրթություն և ուսուցում կազմակերպելու համար, ինչպես օրինակ մասնագիտական հաստատություն կամ դրա մասնաճյուղ:

Մասնագետ-գործընկերների վերլուծություն

Արտաքին գնահատում է, որը նպատակ ունի աջակցել որակի ապահովմանը և բարելավմանը ստուգվող կազմակերպությունում: Այսպիսի ստուգումները անցկացվում են մասնագետների թիմերի կողմից: Գործընկերները կամ քննադատող ընկերները, անհատներ են, որոնք կապ չունեն կրթության և ուսուցման կազմակերպության հետ, բայց աշխատում են նման միջավայրում և ունեն հստակեցված մասնագիտացված փորձ և գիտելիքներ գնահատվող առարկայի վերաբերյալ:

Կրթության և ուսուցման կատարողականության գնահատում

Նշանակում է կրթության և ուսուցման նպատակների իրականացման մակարդակի բացատրական վերլուծություն: Կատարողականությունը կարող է գնահատվել արդյունավետության և տնտեսողականության տեսակետներից:

Գործընթաց

Փոխկապակցված կամ փոխհամագործակցող գործողությունների խումբ է, որը դարձնում է միջոցները արդյունքներ*: Գործընթացները, ըստ իրենց կարևորության, կարող են բաժանվել հիմնական, աջակցող, մատակարար և գործընկեր գործընթացների:

Հիմնական գործընթացներ

Գործողությունների և կապ ունեցող ռեսուրսների կիրառման խումբ է, սպառողին որևէ արտադրանք կամ ծառայություն տալու համար: Հիմնական գործընթացը սկսվում է սպառողի կարիքներից և ավարտվում է սպառողին արտադրանք կամ ծառայություն տալով: Մասնագիտական կրթության և ուսուցման հիմնական գործընթացները կազմված են ուսուցման և ուսուցման աջակցման հետ:

Մատակարար և Գործընկեր գործընթաց

Կազմակերպության մատակարարների և գործընկերների կողմից տրամադրվող ծառայությունների և արտադրանքի գործողությունների շարան է: Մասնագիտական հաստատությունների մատակարար և գործընկեր գործընթացի օրինակները ներառում են ծառայություններ սեփականության ձեռք բերման առողջության մասին հոգալու, աշխատանքային ոլորտի ներկայացուցիչների և այլ կրթական և ուսուցողական կազմակերպությունների հետ դասավանդման ուսումնական միջոցառումների և նման հարցերում համագործակցության հետ կապված:

Աջակցող գործընթաց

Գործառնությունների մի շղթա է կամ ընթացակարգ կազմակերպության հիմնական գործընթացների հեշտ իրականացման վերաբերյալ: Աջակցող գործընթացը առաջին հերթին սպասարկում է ներքին սպառողներին: Կրթական և ուսուցողական հաստատություններում աջակցող գործընթացները ներառում են ուսանողների բարեկեցություն, գրասենյակային և գրադարանային ծառայություններ:

Գործընթացի նկարագրություն

Գրաֆիկական կամ բանավոր ներկայացուցչություն է, որը ներառում է գործողությունների տարբեր փուլեր, ներկայացնելով դրանք, որպես գործընթացների ժամանակագրական առաջընթաց ունեցող շղթա: Նկարագրությունը մատնանշում է աշխատանքային փուլերին վերաբերող պատասխանատվությունները, միջոցները և արդյունքը:

Գործընթացի սեփականատեր

Այն մարդն է, որը նշանակված է, որպես գործընթացի զարգացման պատասխանատու: Գործընթացի սեփականատերը հաճախ ունի օգնականների թիմ, որոնք կիսում են նրա պարտականությունները:

Արտադրանք

Գործընթացի արդյունքն է*: Մասնագիտական հաստատության արտադրանքի օրինակ է ուսանողների համար հնարավոր դարձած կրթական և ուսուցողական ծառայությունը:

Որակ

Վերաբերում է ներհատուկ հատկությունների խմբի պահանջների բավարարման աստիճանին*: Կրթության և ուսուցման որակը կրթության և ուսուցման կարողությանն է բավարարելու հստակեցված նպատակները և սպառողների պահանջները:

Որակի գնահատում

Մի գործողություն է, որը ներառում է գնահատման թիրախի հստակեցված պահանջների որակի բավարարման աստիճանի բացատրական վերլուծություն: Մասնագիտական կրթության և ուսուցման մեջ գնահատումը կարող է կենտրոնանալ այնպիսի ոլորտների վրա ինչպիսիք են իրավասության թեստեր կազմելու նախագծերի որակը, ուսանողների կատարողականությունը, կրթությունը և ուսուցումը, աշխատանքային ոլորտի ներկայացուցիչների հետ համագործակցության արդյունավետությունը, կրթության և ուսուցման պահանջարկի և առաջարկի հարաբերությունը կամ կազմակերպչական գործողությունները որպես մեկ ամբողջություն:

Որակի ապահովում

Որակի կառավարման մաս է, որը ապահովում է, որ որակի պահանջները բավարարվեն*: Մասնագիտական կրթության և ուսուցման մեջ որակի ապահովման օրինակներից են

մասնագիտական հմտությունների ցուցադրումը բարձր միջնակարգ մակարդակով և հմտությունների թեստեր մեծահասակների մասնագիտական կրթության և ուսուցման համար:

Որակի մրցանակ

Շնորհվում է արտաքին կազմակերպությունների կողմից այն կազմակերպությանը, որը բավարարել է որակի պահանջները, որոնք կային իր աշխատանքի համար, և որը ցուցադրում է որակի ավելի լավ ստանդարտ, քան որակի մրցանակի մրցույթին մասնակցած այլ կազմակերպությունները: Որակի մրցանակը կարող է նաև շնորհվել գերազանց կատարողականության և լավ արդյունքների համար աշխատանքի որոշ ոլորտներում: Որակի մրցանակները կարող են լինել նյութական կամ խորհրդանշական:

Որակի չափանիշ

Ցույց է տալիս որակի գնահատման չափանիշը: Մասնագիտական կրթության և ուսուցման մեջ որակի չափանիշի օրինակ է ուսանողների զբաղվածությունը:

Որակի բարելավումը

Գործընթացների և գործողությունների բարելավման վրա աշխատող գործունեություն է, որի արդյունքում կազմակերպության և դրա սպառողների համար առավելությունները շատանում են:

Որակի կառավարում

Համաձայնեցված գործողությունների ամբողջություն է, որոնք ուղղորդում և կառավարում են կազմակերպությունը չմոռանալով որակի մասին*:

Որակի կառավարման համակարգ

Ուղղորդում և վերահսկում է կազմակերպությունը չմոռանալով որակի մասին*:

Որակի «ձեռնարկ»

Մի փաստաթուղթ է, որը հստակեցնում է կազմակերպության որակի կառավարման համակարգը*: Որակի ուղեցույցը կարող է բաղկացած լինել մի քանի փաստագրված տվյալներից և դրա նպատակն է հեշտացնել կրթական և ուսումնական կազմակերպության ամենօրյա աշխատանքը: Այսօր այդ նույն փաստաթուղթը անվանվում է նաև «գործնական ձեռնարկ»:

Որակի համակարգ

Մի մեխանիզմ է, որ օգտագործվում է պարբերաբար գտելու համար որակի սկզբունքներն ու նպատակները, որոնք հստակեցվել են ղեկավարության կողմից ողջ կազմակերպության համար: Համակարգը կոնկրետ կազմակերպության համար է և բաղկացած է տարրերից, օրինակ հիմնական օրենքներից և ընթացակարգերից, որոնք պետք է դիտարկվեն կազմակերպության ներսում: Դրանք կարող են փաստագրվել որակի ձեռնարկում, բայց ձևից ավելի կարևոր է այն, որ համակարգը գործնական է և մղում է պարբերաբար գործողությունների: Այսօր, «գործառնական

համակարգ» տերմինը օգտագործվում է նաև, երբ որակի կառավարումը շեշտելու մտադրությունը գործողությունների անբաժանելի մասն է կազմում:

Որակային աշխատանք

Ներառում է բոլոր այն գործունեությունները, որոնք կենտրոնացած են բարելավելու կազմակերպչական ֆունկցիաների որակը և ապահովելու դրանց որակը:

Ինքնագնահատում

Կազմակերպության և դրա աշխատողների գործառույթների բացատրական վերլուծությունն է: Ինքնագնահատումը ուսումնասիրում է, թե արդյոք գործառույթների նպատակները իրականացվում են և արդյոք դա կատարվում է հնարավորինս ամենախելամիտ ճանապարհով: Ինքնագնահատումը օգնում է կազմակերպությանը ճանաչել իր ներկայիս կարգավիճակը, դնել նոր խնդիրներ և սկսել զարգացման գործողություններ լուծելու համար այդ խնդիրները:

Ռազմավարություն

Սահմանում է նպատակներին հասնելու միջոցները, հետևաբար տրամադրվում է ուղեցույցներ կազմակերպչական գործառույթների համար: Հիմնվելով ռազմավարության վրա, յուրաքանչյուր կազմակերպություն կազմում է իր աշխատանքային պլանը և որոշում հստակ միջոցներ դրանց կիրառման համար:

Արժեքներ

Ցույց են տալիս, թե ինչն է կարևոր կազմակերպության գործառույթներում և ինչի վրա են այդ գործառույթները հիմնված: Մասնագիտական կրթության և ուսուցման արժեքները կարող են համապատասխանել օրինակ աշխատանքային ոլորտի ներկայացուցիչներին և ուսանողակենտրոն մոտեցմանը:

Տեսլական

Կազմակերպության ցանկալի ապագա վիճակի ընկալումն, որը արդարացված է կազմակերպության գոյության իմաստով և արժեքներով:

Որակի կառավարման խորհրդատվությունը մասնագիտական կրթության և ուսուցման համար նպատակ ունի ծառայելու որպես ռազմավարական գործիք զարգացնելու համար որակի կառավարում ՄԿՈԻ- ծրագրերի իրականացնողների կազմակերպությունների, նրանց միավորների և գործելու տեսակների համար: Այս հրապարակումը բաղկացած է և՛ որակի կառավարման խորհրդատվություններից և համապատասխան ներածական տեքստերից: Հրապարակումը պարունակում է նաև բառարան:

Ֆինլանդիայի կրթության/գրադարանի միջազգային խորհուրդ

PL 380 (Կումպուլանտի 3, 00520 Հելսինկի)

00531 Հելսինկի

Հեռախոս (09) 774 775

Ֆաքս (09) 7747 7865

kirjasto@oph.fi

ISBN 978-952-13-3700-0 (pdf)

ISBN 978-952-13-3699-7